Ազգ
Azg
28 ՀՈՒՆԻՍ 2012 ՀԻՆԳՇԱԲԹԻ 117(4969)
ISSN: 1829-1651

# Ո՞ւր են քշում Իլհամ Ալիեւին

Հունիսի 26-27-ին Իլհամ Ալիեւը Ստամբուլում էր: Առիթը Սեւծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության 20-ամյակն էր: Այդ շրջանակներում կայացել են Թուրքիա-Ադրբեջան երկկողմ քննարկումներ: Ըստ երեւույթին, ինչ-որ բան մինչեւ վերջ չի հաջողվել ճշգրտել: Եվ այդ «ինչ-որ բանը» ամենասկզբունքայինն է: Այդպիսի տպավորություն է թողնում Huriyyet-ի անգլերեն տարբերակի մի հրապարակումը, որը վերաշարադրել է vesti.az-ը:

Ըստ այդմ, «չնայած Ադրբեջանի՝ հավասարակշռված դիվանագիտական դիրքորոշում պահելու ջանքերին, Իրանը, ԱՄՆ-ը եւ Ռուսաստանը փորձում են ներազդել պաշտոնական Բաքվի արտաքին քաղաքականությանը եւ իշխանություններին թեքել գործելու այն մաներայով, որը կհամապատասխաներ այդ տերությունների շահերին»:

Հոդվածագիրն առանձնակի շեշտադրել է Իրանի հանգամանքը, որը «իր ազգային շահերին սպառնալիք է համարում Ադրբեջանի՝ որպես որեւէ պետության ցուցումներից անկախ գոյությունը»: Նրա կարծիքով, Իրանում «գտնում են, որ երկրում ավելի քան 20 մլն ադրբեջանցիների առկայությունը վտանգ է ԻԻՀ տարածքային ամբողջականության համար եւ հնարավոր հակամարտության բռնկման սպառնալիք է»:

Huriyyet-ի «եզոպոսյան լեզվից» կարելի է հասկանալ, որ անկախ Ադրբեջանը Իրանում ապրող էթնիկ ադրբեջանցիներին կարող է օգտագործել ԻԻՀ տարածքային ամբողջականության դեմ եւ հրահրել հակամարտություն, այդ իսկ պատճառով «Իրանի շահերին ձեռնտու է, որ Ադրբեջանը, ինչպես եւ անցյալում, մտնի Ռուսաստանի կազմի մեջ»: Եթե մի երկիր իրոք մյուսի հանդեպ թշնամաբար է տրամադրված այնքան, որ Իլհամ Ալիեւը իրեն հայտարարում է «աշխարհի բոլոր ադրբեջանցիների առաջնորդ», ապա շատ օրինաչափ է, որ մյուսը, տվյալ դեպքում՝ Իրանը, պետք է ամեն մի միջոց ձեռնարկի՝ զսպելու նրա հավակնությունները:

Թուրքական պարբերականը առանձնահատուկ անդրադարձել է Վլադիմիր Պուտինի Կրեմլ վերադարձին եւ ենթադրել, որ «պաշտոնական Մոսկվան օգտագործելու է իր քաղաքական եւ տնտեսական բոլոր լծակները, որպեսզի պահպանի ազդեցությունը ողջ Հարավային Կովկասում, այդ թվում՝ Ադրբեջանում»: Թերթը միաժամանակ նկատել է տալիս, որ «չի կարելի մոռանալ այնպիսի ուժեղ խաղացողի, որպիսին ԱՄՆ-ն է, որի շահերը դիմադարձ են գնում ռուս-իրանական աշխարհաքաղաքական ցանկություններին»: Huriyyet-ը եզրահանգում է, որ «այժմ Ադրբեջանին հարկ կլինի արտաքին քաղաքական ընտրություն կատարել: Եվ այդ ընտրությունից շատ բան է կախված»:

Որեւէ մեկը կասկած ունենալ չի կարող, որ Huriyyet-ի հոդվածը, ինչպես ընդունված է ասել նման դեպքերում, հիմնականում արտահայտում է Թուրքիայի կառավարության տեսակետը: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ լույս է տեսել Ստամբուլում Իլհամ Ալիեւի եւ Թուրքիայի նախագահի միջեւ բանակցությունների մեկնաբանությունների համատեքստում: Այդուհանդերձ, դա նկատելիորեն զգուշավոր դիտարկում է, եւ հեղինակը կարծես չի փորձում կանխորոշել Ադրբեջանի աշխարհաքաղաքական ընտրությունը: Թեեւ, իհարկե, թուրքական կողմի պահանջն զգացվում է:

Դա, ըստ ամենայնի, հիմնավոր արեւմտյան կողմնորոշում ընդունելու հորդոր է Ադրբեջանին, ինչից կարելի է եզրակացնել, որ Անկարան ձգտում է «Ադրբեջանի հետ աշխատանքը» ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական երկրների հետ իր հարաբերություններում դարձնել արտաքին քաղաքական դիվիդենտ: Կհամաձայնի՞ նման սցենարի Իլհամ Ալիեւը: Հավանաբար՝ այո: Քանի որ դա իր հերթին նրա համար հնարավորություն է, որ մեղմի ժողովրդավարության եւ մարդու իրավունքների հարցերով եվրոպական երկրների՝ Ադրբեջանի հանդեպ վերջերս մեծացած ճնշումը:

Այդ դեպքում, սակայն, Իլհամ Ալիեւը ստիպված կլինի դիմագրավել իրանական կողմի կանխարգելիչ քայլերը: Մանավանդ՝ ներքին կյանքում, որտեղ իրավիճակը կայունությունից չափազանց հեռու է: Այսպես թե այնպես՝ Ադրբեջանի համար մեկնարկել է դեգերումների հերթական շրջափուլը: Նման դեպքերում խելամիտ առաջնորդները ձգտում են արտաքին աշխարհի ուշադրությունը իրենց վրա չսեւեռել՝ հասկանալով, որ երբ դիմակայության են գնում հզորները, փոքրերը, եթե չեն ուզում ոտքի տակ տրորվել, մի կողմ են քաշվում:

Ադրբեջանը ընտրել է ուժային կենտրոններից մեկին «մաս կազմելու» տարբերակը: Եվ դա արեւմտյան ալյանսն է: Իր հերթին Թուրքիան Իլհամ Ալիեւին մղում է կարծես այդ մասին շուտափույթ հայտարարելու: Եվ, ըստ երեւույթին, «նորին մեծությունը» այլընտրանք չունի: Եվ զուր է «Զերկալո»-ի մեկնաբանը խորհուրդ տալիս, որ Ադրբեջանը «սեփական խնդիրների տնօրինումը չվերապահի այլոց»: Իլհամ Ալիեւի համար հետդարձի ճանապարհ չկա: Դրա համար Արեւմուտքը ժամանակին վճարել է տասնյակմիլիարդավոր դոլարների նավթագազային ներդրումներով: Եվ հարկ եղած դեպքում Ադրբեջանին կմղի Իրանի, բացառված չէ՝ Թուրքմենիայի հետ առճակատումների: Քաղաքական մանրադրամը նրա համար է, որ դրանով վճարեն «կեղտոտ գործարքների» համար:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# ԱՄՆ դեսպան. Չենք ցանկանում հրաժարվել հայ-թուրքական արձանագրություններից

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ԱՄՆ դեսպան Ջոն Հեֆերնի ներկայացմամբ՝ Թուրքիան ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի կարեւոր դաշնակիցներից է, եւ Թուրքիայի հետ աշխատում են տարածաշրջանային բազմաթիվ հարցերով: «Սակայն եթե դաշնակից ենք, չի նշանակում, որ ամեն ինչի վերաբերյալ համակարծիք պետք է լինենք: Կան բազմաթիվ հարցեր, որոնց շուրջ ԱՄՆ-ի եւ Թուրքիայի միջեւ լուրջ բանավեճեր են լինում», հայաստանյան չորս լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ երեկ կայացած հանդիպմանն ասաց դեսպանը՝ հավելելով, որ հայ-թուրքական արձանագրություններն այդ շարքից են:

Հեֆերնի ներկայացմամբ՝ Վաշինգտոնը ամեն մակարդակով աշխատանքներ է իրականացնում արձանագրությունների ուղղությամբ գործընթացները շարունակելու:

«Չենք ցանկանում հրաժարվել արձանագրություններից: Մեր ուղերձը թուրքական իշխանություններին այն է, որ վավերացվեն ու գործածության մեջ դրվեն առանց որեւէ նախապայմանի: Պետքարտուղար Քլինթոնն էլ շատ հստակ արտահայտվեց, որ գնդակը Թուրքիայի խաղադաշտում է եւ նրանց հերթն է որեւէ քայլ կատարելու», ասաց դեսպանը՝ կարեւորելով, որ երկու երկրների խորհրդարանները արձանագրությունները հետ չեն կանչել:

«Մենք ձգտում ենք հաշտեցման երեք օղակներում՝ առաջինը արձանագրությունների վավերացումն ու գործարկումն է առանց նախապայմանների: Տնտեսական միջոցների ձեռնարկում՝ մասնավորապես Գյումրի-Կարս երկաթգծի բացումը, որը բովանդակային տնտեսական քայլ է եւ օգտակար կլինի թե՛ Արեւելյան Թուրքիայի, թե՛ Հայաստանի համար: Երրորդը փոխայցելություններ են, մարդկանց միջեւ շփումները, որը կվերացնեն անվստահությունն ու միջավայր կձեւավորեն հաշտեցման համար»:

Դեսպանի ներկայացմամբ՝ պետքարտուղար Քլինթոնը բազմիցս հորդորել եւ պահանջել է, որ արձանագրությունները վավերացվեն առանց նախապայմանների, եւ հարցը չկապվի Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծմանը: «Մինչ այժմ հաջողություններ չենք ունեցել, սակայն չենք պատրաստվում հրաժարվել այդ ուղղությամբ աշխատելուց»: Տես էջ 2

# Վալերի Բոյերը պատրաստում է նոր օրինագիծ

Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր վերընտրված Վալերի Բոյերը պատրաստում է Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող նոր օրինագիծ՝ խորհրդարանի օրակարգ մտցնելու համար: «Արմենպրեսի» փոխանցմամբ՝ այս մասին ֆրանսիացի պատգամավորն ասել է թուրքական «Ջիհան» լրատվական գործակալությանը տված հարցազրույցում:

Բոյերն ասել է, որ իր ընտրողներին խոստացել է ընտրվելու դեպքում Ֆրանսիայի խորհրդարան ներկայացնել նոր օրինագիծ, որի մեջ հաշվի առնված կլինեն Ֆրանսիայի սահմանադրության պահանջները: Բոյերը հավելել է, որ մինչեւ այսօր թուրքերից սպառնալիքներ ու վիրավորանքներ է ստանում: Իսկ նախորդ խորհրդարան ներկայացրած Ցեղասպանությունների ժխտումը քրեականացնող իր հեղինակած օրինագծի հանդեպ Թուրքիայի կառավարության ու մամուլի անհանդուրժողական ու հակաժողովրդավարական դիրքորոշումը Վալերի Բոյերը որակել է անպատասխանատվություն:

Ի. Պ.

# Նռնակի պայթյունից 3 զոհ, 1 վիրավոր

Տավուշի մարզի Նավուր գյուղում նռնակի պայթյունից զոհվել է 3 եւ վիրավորվել 1 մարդ: Նռնակը պայթեցրել է 53-ամյա Վալենտին Սարգսյանը երեկ, կնոջ՝ Լենետա Պետրոսյանի հետ վեճից հետո: Երբ կինը վեճից հետո գնացել է հորական տուն, Վ. Սարգսյանը նռնակ է նետել աներոջ տան մեջ: Նռնակի պայթյունից զոհվել են Վ. Սարգսյանը, նրա կինը, աներորդու կինը՝ Թամարա Հարությունյանը, իսկ աներորդին վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց: Դեպքը տեղի է ունեցել ժամը 12:30-ի սահմաններում:

# Ստեղծվել է գերարագ անթել համացանց

NASA-ի, Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի եւ Թել Ավիվի համալսարանի մի խումբ գիտնականների հաջողվել է մշակել վայրկյանում 2,5 տերաբիտ արագությամբ տվյալների անթել հաղորդման համակարգ: Դա հնարավոր է դարձել նոր մեթոդի շնորհիվ, երբ տվյալները փոխանցվում են ոչ թե մեկ ալիքով, այլ միանգամից մի քանիսով, հաղորդում է newsru.co.il կայքէջը:

Գիտական խմբի իսրայելցի մասնակիցները պատասխանատու էին գերարագ անթել համացանցի տեխնիկական աջակցության մշակման համար:

«Կալկալիստ» թերթը նշում է, որ տվյալների փոխանցման նոր արագությունը 3000 անգամ գերազանցում է առայժմ հայտնի ամենաարագ փորձարարական նախագծի հնարավորությունները եւ 1 միլիոն անգամ մեծ է այսօր բջջային կապի օպերատորների ապահոված առավելագույն արագությունից:

Պ. Ք.

# Ռուսաստանի նախագահի հանդիպումը հայ եւ հույն եկեղեցականների հետ



Հունիսի 26-ին Ռուսաստանի Դաշնության նախագահ Վ. Վ. Պուտինն Իսրայել կատարած այցի ընթացքում եղավ նաեւ Երուսաղեմի Սուրբ Հարության տաճարում: Տաճարի մուտքի մոտ նրան դիմավորեցին Հունաց եւ Հայոց պատրիարքությունների ներկայացուցիչները: Հունաց կողմից պատրիարք Թեոփիլը եւ Հայոց սրբոց Հակոբյանց վանքից Էմմանուել վարդապետ Աթաջանյանն ու հայ միաբանները բարձրաստիճան հյուրին առաջնորդեցին դեպի Տնօրինական վայրեր: Մուտք գործելով տաճար՝ նախագահ Պուտինը խոնարհվեց սբ տապանաքարին, որից հետո հոգեւորականները հյուրին ուղեկցեցին դեպի սբ գերեզմանի բոլորաշեն: Նախագահը մի քանի րոպե ծնրադիր աղոթք առաքեց առ Աստված:

Այցի ընթացքում պատրիարք Թեոփիլը հյուրին կարճառոտ բացատրություններ էր տալիս սրբատեղիների պատմությունից: Տաճարում շրջելիս նախագահը բարձրացավ Գողգոթա եւ մոմ վառեց: Մոմեր վառվեցին նաեւ Գյուտ Խաչ եկեղեցում: Այստեղ, օգտվելով առիթից, Էմմանուել վարդապետը նշեց, որ մեծարգո հյուրը Տնօրինական վայրեր է այցելել Երուսաղեմի հայոց տոնացույցով՝ Կոստանդիանոս կայսեր եւ Հեղինե կայսրուհու հիշատակի օրը, կայսրուհի՝ հենց որի ջանքերով է հայտնաբերվել Սուրբ եւ կենսատու Խաչը, եւ որ Խաչի որոնման աշխատանքները ղեկավարելիս Հեղինե կայսրուհին կանգնած է եղել հայոց տիրույթներում, ուր այսօր Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է: Հնչեցին հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամության եւ օրհնության խոսքեր, ինչպես եւ խաղաղության մաղթանքներ տարածաշրջանին եւ համայն աշխարհին: Այնուհետեւ Հունաց պատրիարքը նախագահին եւ նրան ուղեկցողներին առաջնորդեց դեպի Հովսեփ Արիմաթիացու մատուռը՝ նշելով, որ Սբ Հարության տաճարի այդ մասը եւս պատկանում է հայերին, որ թողնում են այստեղ արարողություններ կատարել Ասորվոց ուղղափառ եկեղեցու սպասավորներին, որ հայոց հետեւակն են: Այնուհետեւ նախագահին ցույց տվեցին Ղպտի ուղղափառ եկեղեցու մատուռը (սբ գերեզմանի սնարից մասը), որ 1300 թվականին կառուցել է Հայոց Հեթում Բ թագավորը, իսկ հետագայում սրբատեղին նվիրվել է ղպտիներին, որովհետեւ նրանք եւս Հայ եկեղեցու հետեւակն են: Վերջում նախագահին ցույց տվեցին Աստվածածնի ուշաթափման եւ Երկրորդ Գողգոթա հայկական սրբատեղիները, որից հետո նախագահը շփվեց տաճարում խմբված հավատացյալների հետ:

Մերձավորարեւելյան այցի շրջանակներում նախագահ Պուտինն այցելեց նաեւ Բեթղեհեմի Սբ Ծննդյան տաճարը, ուր հույն հոգեւորականների հետ մեկտեղ նրան դիմավորել են նաեւ հայ միաբանները՝ Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանի գլխավորությամբ:

ԳԵՎՈՐԳ ՀՆԶԱՅԱՆ
Երուսաղեմ

# Ընդդիմությունը նախագահի առնվազն երեք թեկնածու կունենա



ՀԱԿ-ի հանրահավաքի ասելիքը օրակարգային կարելի էր այլեւս չհամարել, քանի որ ընտրությունների թեման ՀԱԿ-ի խորհրդարան անցնելով ի վերջո փակվեց, ու անգամ հանրահավաքի հրավիրումն այս պահին ժամանակավրեպ էր: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ արհեստական թե ինքնաբերաբար՝ ՀԱԿ-ը փորձում է օրակարգ բերել քաղաքական ընդդիմության բոլոր միավորների հետ համագործակցելու խնդիրը, որի ուղղորդումը կարծես այս պահին ՀԱԿ-ի ցանկությունների եւ հնարավորությունների տիրույթից դուրս է: Եթե անգամ այդպիսի խնդիր առաջանա՝ այդ օրակարգը թելադրելու է այն միավորը, որը հանրության վրա բավարար ազդեցություն ունի: Իսկ ՀԱԿ-ի ներսում արդեն շատ վաղուց գիտեն, որ հանրության ազդեցության առումով իրենց ցուցիչը շատ ու շատ է փոքրացել, բացի դրանից՝ հենց ՀԱԿ-ում արդեն միմյանց հետ այլեւս սինքրոն չեն գոյատեւում տարբեր սերունդների տեսակետները, ու այստեղ վերջին տեղում չէ սերնդափոխության խնդիրը՝ թարմացնելու համար դեպի հասարակություն արյունատար երակը: Սա ընթանալու է զուգահեռ խորհրդարանական գործունեությանն ու նախագահական ընտրությունների վերաբերյալ մոտեցումների բյուրեղացմանը կամ գուցե նույնիսկ բախմանը (Նիկոլ Փաշինյանի վստահ լողալը խորհրդարանում հենց դրա ակնարկն է): Ու անգամ այն, որ հանրահավաքին ՀԱԿ-ի առաջնորդը կրկին ու վերստին նախ շեշտադրումներ արեց ղարաբաղյան հարցի վրա, փորձելով այս թեմայով ակտուալ դարձնել իր ասելիքը ու դրանից հետո անդրադարձ արեց ընդդիմությանն ու նրա համագործակցության հեռանկարներին, ցույց է տալիս, որ ՀԱԿ-ի ու նրա առաջնորդի ասելիքի պակաս կա, սա էլ գալիս է աստիճանաբար հալվող հասարակության վստահության պակասից եւ ԲՀԿ-ի սարքած շիլափլավից ու անորոշությունից:

Ղարաբաղյան կարգավորման տերպետրոսյանական վերլուծությունը, երբ կարծես որեւէ հրամայական այս պահին այդ ուղղությամբ չկա, համանախագահների տարբերական հայտարարությունների հերթագայությունում սեւ կատվի որոնումը եւ «լոսկաբոսյան» ընդամենն ափսոսանքն ու մաքսիմալիստական բառի սեփական ինտերպրետացիաները որպես նախորդ հայտարարությունների համեմատ կոշտություն մատուցելը հնարք է, բայց շատ հնացած, իսկ զանազան շահեր արտահայտող վերլուծություններն (Ուեյն Մերի) ու դրանցից արված սեփական հետին միտք պարունակող եզրակացություններն էլ որպես վերին ճշմարտություն մատուցելը նույնիսկ ՀԱԿ-ի օրակարգն ի զորու չէ ակտուալ դարձնել եւ ՀԱԿ-ի առաջնորդի մանեւրի դաշտը լայնացնել:

Հասկանալի է, որ Ղարաբաղի հարցը պետք է լինի քաղաքական ուժերի համար առանցքային հարց, սակայն «ավազակապետության» դեմ պայքարի թեմայից առաջ բերել Ղարաբաղի հարցն ու փորձել այդպես փոխհատուցել հանրության վստահության պակասի պատճառով առաջացած վակուումը, նշանակում է, թե ՀԱԿ-ի առաջնորդի զինանոցն աղքատացել է, եթե չասենք՝ զենքերն սպառվել են, իսկ դրանք շատ չեն էլ կարող լինել՝ տարածաշրջանային գեոկենտրոնների մրցակցություն, հայ-թուրքական հարց, ղարաբաղյան հարց. վերջին երկու հարցում հարաբերական դադար է, տարածաշրջանային իրադարձությունների վրա մերոնք տաշեղի ազդեցություն ունեն, ուրեմն մի հարց մնաց, որ հավերժական ջուր է ուզում, եւ այդ ջուրը կարող է լցնել ամեն ոք, դա Ղարաբաղն է: Ահա եւ բանուգործ չունենալով եւ անպատեհ ժամանակ հանրահավաք հրավիրելով՝ մարդը խոսեց հենց այդ՝ ոչնչով չպարտավորեցնող թեմայից:

Իսկ ՀԱԿ-ի, ԲՀԿ-ի, ՀՅԴ-ի եւ մասամբ «Ժառանգության» համագործակցության հնարավորությունից, որ ՀԱԿ-ի առաջնորդը խոսում է՝ հիշելով նախընտրական ժամանակը, վերջինից շահեց ԲՀԿ-ն, մասամբ գուցե ՀԱԿ-ը՝ խորհրդարանում խմբակցություն ունենալով, իսկ «Ժառանգությունն» ու ՀՅԴ-ն տուժեցին, ու դեռ հարց է՝ ով ում հաշվին է շահել-տուժել: Իսկ ընդհանուր առմամբ՝ ԲՀԿ-ն ապրի, մի լավ «ֆռռացրեց» ընդդիմությանը եւ ապագայում էլ «ֆռռացնելու» է, այնպես որ չարժե անգամ ԲՀԿ-ի փաստաբանը դառնալ եւ պաշտպանել նրան, թե պարտադիր չէ, որ նա խորհրդարանում ընդդիմություն դառնալու հայտարարություն անի, իշխանություն չէ, ուրեմն ընդդիմություն է: «Բարգավաճը» երեւի լավ էլ գիտի անելիքը, ու հազիվ թե ՀԱԿ-ի առաջնորդի շոյիչ խոսքերի կարիքը զգում է՝ ոչ քաջալերանք ու ոչ էլ ճնշում ԲՀԿ-ի անելիքի վրա հազիվ թե ազդեն, նրա անելիքն այլ խնդիրներ լուծելու համար է:

Իսկ կառավարության ծրագրի 49 դեմ ձայների մեջ յուրաքանչյուր քաղաքական ուժ իր շարժառիթն ունի, եւ ՀԱԿ-ի շարժառիթը ԲՀԿ-ի շարժառիթին չի բռնում, ՀՅԴ-ինը՝ այդ երկուսի շարժառիթին, ու ամառային արձակուրդից հետո բոլոր այս ուժերի շարժառիթները կարող են փոխվել ինչպես նաեւ գործելակերպը:

Ընդհանրապես՝ ընդդիմության համագործակցության մասով մի շարք անսինքրոն շարժընթացներ վկայում են, որ նախագահական ընտրություններին բացառվում է միասնական թեկնածուի շուրջը ընդդիմության մի սեղանի մոտ նստելու հնարավորությունը: Նախ՝ առկա բոլոր ուժերը գաղափարախոսական եւ մտածելակերպային ընդգծված տարբերություններ ունեն: Գումարած դրան՝ ամեն մարդ ցանկանալու է մյուսների համագործակցությունն իր թեկնածուի շուրջը: Իսկ դա, գիտեք, ամենակարճ ճանապարհն է չհամագործակցելու: Միայն այն հանգամանքը, որ ընդդիմադիր քաղաքական ուժերից ոչ մեկը չի բարձրաձայնել այն թեկնածուի անունը, որով գնալու է մի ութ ամիս հետո ընտրությունների, ամեն ինչ ասում է: Ըստ ամենայնի՝ ընդդիմությունը նվազագույնը երեք թեկնածու ունենալու է:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԻՄՆԱԴՐԱՄ

# «Հայաստան» համահայկական հիմնադրամը 2011-ին

«Հայաստան» համահայկական հիմնադրամը թողարկել է իր 2011-ի գործունեության տարեկան հաշվետվությունը շքեղ ալբոմի ձեւով, որտեղ կոնկրետ թվերով, լուսանկարներով եւ նվիրատուների անվանացանկերով ներկայացված են անցյալ տարի հիմնադրամի կողմից կատարված եւ ընթացքի մեջ գտնվող ծրագրերը: Անդրադառնանք դրանց:

Շուշիի Խաչատուր Աբովյանի անվան շենքի նորոգում, դպրոցների կառուցում Շիրակի մարզի Աշոցք, Տավուշի մարզի Դիտավան, Վանաձորի թ. 30 մանկապարտեզի բարեկարգում, Երեւանի Շենգավիթի շրջանի գիշերօթիկ մսուր-մանկապարտեզի հիմնանորոգում, Շուշիում գիշերօթիկ դպրոցի կառուցում, Ստեփանակերտում եւ Երեւանում տարեցների տուն ինտերնատների հիմնանորոգում, ԼՂՀ Մարտունու քաղաքային հիվանդանոցի նոր շենքի կառուցում, Սյունիքի մարզի Կապանի բժշկական կենտրոնի մանկական բաժանմունքի մասնաշենքի, Կոտայքի մարզի Չարենցավանի բժշկական կենտրոնի մանկաբարձական բաժանմունքի, Երեւանի Նոր Նորքի «Սուրբ Գրգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի դիալիզի եւ նեֆրոլոգիայի բաժանմունքի հիմնանորոգում եւ գլխավորը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մարտունու շրջանի Գիշի եւ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղերում, Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի հիմնանորոգում եւ արդիականացում, մանկապարտեզներ ԼՂՀ Մարտունու շրջանի Ղուզե Ճարտար եւ Հադրութի շրջանի Դրախտիկ գյուղերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մոտ 200 համայնքների համար ջրամատակարարման խնդրի լուծում:

Ա. Մ.




# ՀՀ նախագահն արձագանքել է իրեն ուղղված բաց նամակին

Նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպել է Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանին: Հանդիպման ընթացքում հանրապետության Նախագահն առաջարկել է Հանրային խորհրդի հովանու ներքո սկսել քննարկումներ հեռուստաընկերությունների եթերային քաղաքականության վերաբերյալ:

ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Արմեն Արզումանյանը tert.am-ին ասել է, որ Հանրային խորհուրդն առաջիկայում կկազմակերպի հանդիպումներ Հեռուստատեսության ու ռադիոյի ազգային հանձնաժողովի, հեռուստաընկերությունների ղեկավարների, խնդրով զբաղվող ՀԿ-ների ու մտավորականների մասնակցությամբ:

Հիշեցնենք, որ մի քանի օր առաջ հայտնի մտավորականները, երիտասարդական կազմակերպություններն ու կառույցները բաց նամակ էին հղել Նախագահ Սերժ Սարգսյանին եւ նամակում հայտնել իրենց անհանգստությունը, որ հայկական գրեթե բոլոր հեռուստաընկերությունների եթերը լցված է քրեական ու քրեածին, հակասոցիալական սերիալներով, «հումորային» ծրագրերով, որոնք ունենում են բացասական ազդեցություն հասարակության վրա:

Ի. Պ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# ԱՄՆ դեսպան. Չենք ցանկանում հրաժարվել հայ-թուրքական արձանագրություններից

*1-ին էջից*

**Թեեւ ԱՄՆ-ը չի ճանաչում ԼՂՀ անկախությունը, սակայն միակ պետությունն է, որ Սենատի հաստատմամբ ամեն տարի ամերիկյան պետական օգնություն է տրամադրում ԼՂՀ-ին: Սրանով հանդերձ, երբ ադրբեջանական կողմը ռազմատենչ հայտարարություններ է կատարում կամ ադրբեջանական ստորաբաժանումները դիվերսիոն գործողություններ են իրականացնում ամերիկյան պետական օգնություն ստացող պետության դեմ, պաշտոնական Վաշինգտոնը դատապարտելու փոխարեն հավասարության նշան է դնում կողմերի միջեւ: «Ազգ»-ի դիտարկմանն ու խնդրանքին՝ բացատրել նման մոտեցումը, դեսպան Հեֆերնն ասաց.**

**«Արդեն մի քանի տարի այդ աջակցությունը ցուցաբերվում է տարեկան շուրջ երկու միլիոն դոլարի չափով: Հիմնականում դրանք ուղղված են ականազերծման եւ ջրամատակարարման ծրագրերին: Հռետորաբանության, շփման գծի եւ բռնությունների հետ կապված մի քանի նկատառում ունեմ: Համանախագահող երեք երկրների նախագահները՝ Օբաման, Պուտինն ու Օլանդը Լոս Կաբոսում հայտարարությամբ վերահաստատեցին, որ խնդրի լուծումը խաղաղ կարգավորումը, եւ բռնություններն ու ռազմաշունչ հռետորաբանությունը տեղ չունեն: Երեւանում պետքարտուղար Քլինթոնը՝ հրապարակային եւ մասնավոր զրույցներում անդրադարձավ թեմային: Երբ նա Երեւանում էր, առավոտյան Հայաստանի սահմանին 3 հայ զինվոր էր զոհվել: Իր հայտարարությամբ նա դատապարտեց բռնությունը եւ այս կարգի ողբերգությունները որակեց անընդունելի: Նա հրապարակավ ասաց, որ ուղերձը պատրաստվում է փոխանցել Բաքվին, Բաքվում նախագահ Ալիեւի հետ հանդիպմանը նույնը կրկնեց եւ վերոնշյալ հարցերը բարձրացրեց»:**

**Անդրադառնալով ՀՀ խորհրդարանական ընտրություններից հետո ԱՄՆ արձագանքին, որն ավելի մեղմ էր, քան եվրոպականը, Հեֆերնը ասաց, որ ընտրություններին մեծ ուշադրություն են դարձրել եւ փորձել են օբյեկտիվ լինել: Դեսպանի խոսքերով՝ ընտրություններին անաչառ գնահատական են տվել: «Տեղամասերում ընտրությունը լավ էր կազմակերպված, քվեարկությունը թափանցիկ էր: Երկու ամենամեծ խնդիրներն էին ընտրակեղծիքների լայնատարած դրսեւորումը եւ վարչական ռեսուրսների չարաշահումը ու հովանավորչությունը հօգուտ կառավարական ուժերի: Այս պահին ամենակարեւորն առաջ նայելն է, քանի որ առջեւում նախագահական ընտրություններ են: Մենք հորդորում ենք գործող իշխանություններին՝ շարունակել բարեփոխումների քաղաքականությունն ու լրատվամիջոցների ազատ հասանելիությունը ընդդիմադիր անկախ քաղաքական գործիչների համար ոչ միայն ընտրություններին նախորդող 40 օրերին», ասաց դեսպանը՝ հավելելով, որ հավասար պայմաններ պետք է ապահովվեն վարչական ռեսուրսի օգտագործման առումով, եւ ավելի արդարացի մոտեցում լինի:**

# Վրաց իշխանությունը Ջավախքում ընդդիմադիր չի հանդուրժում

## *Իվանիշվիլու կողմնակցին չերքակալում են, որ 99 տոկոս մասնակցությամբ 100 տոկոս իշխանական «կողմ» ունենա՞ն*

Վրաստանում ազգային փոքրամասնությունների համախմբված բնակության երկու հիմնական շրջանները՝ Սամցխե-Ջավախեթին ու Քվեմո Քարթլին շատ հետաքրքրական վարքագիծ են դրսեւորում, ավելի ճիշտ՝ հետաքրքրական վարքագիծ է վերագրվում դրանց, երբ հարեւան երկրում ընտրություններ են: Երկու տարածաշրջանների պարագայում էլ այնպիսի գերմասնակցություն ու իշխանասիրություն է ներկայացվում որպես քվեարկությունների արդյունք, որպիսին ամենաժողովրդավարական երկրները երբեւէ չեն էլ երազել, եւ դա այն դեպքում, երբ վրացական իշխանությունների ներկայիս մոտեցումը ազգային փոքրամասնություններին գրեթե ոչ մի բանով չի բարելավվել ոչ նախորդ իշխանությունների, ոչ էլ խորհրդային ժամանակների համեմատությամբ:

Աշնանը Վրաստանում ընտրական շրջան է, որ, հարավկովկասյաններից չտարբերվող տրամաբանությամբ, արդեն իսկ մեկնարկել է, ընդ որում՝ բոլոր բացասական դրսեւորումներով հանդերձ: Գալիք ընտրությունների հիմնական ընդդիմադիր դարձող վրացի միլիարդատեր Բիձինա Իվանիշվիլու «Վրացական երազանք» կուսակցությունը, որ ներկայումս հանդես է գալիս դաշինքով, հավակնում է առաջատար լինել, դրա համար էլ իշխանական ուժերն արդեն իսկ ամենայն բծախնդրությամբ զբաղվում են ոչ միայն կուսակցության, այլեւ միլիարդատիրոջ միլիարդների հարցերով: Իսկ թե ի՞նչ առնչություն կա Ջավախքի ու Իվանիշվիլու միջեւ՝ «բացահայտում են» հայաբնակ շրջաններում իշխանության ճնշումների դրսեւորումները:

Մինչ ճնշումները կհասնեին Ջավախք, տարբեր հակաիվանիշվիլիական «ստուգումները» վկայում են, որ Վրաստանում էլ նախընտրում են ընդդիմադիր ներկայացողի գրպանին խփել, մինչեւ հարմար առիթ ընձեռվի՝ ավելի բարձր տեղերին հասնելու:

Մասնավորապես, մանր-մունր գործերի շարքում մեկ էլ վրացական դատախազությունը արգելանք դրեց Իվանիշվիլու եղբորը պատկանող «Գլոբալ ՏՎ» ընկերության արդեն տեղադրված ու դեռ պահեստներում գտնվող ավելի քան 300 հզ. ալեհավաքների վրա, թե իբր դրանք բնակչությանը տրվում են արտոնյալ պայմաններով, ուստի ընտրակաշառք են, մինչդեռ այս ալեհավաքները հնարավորություն են տալիս դիտելու նաեւ ընդդիմադիր հեռուստաալիքներ, ինչպիսին նույն Իվանիշվիլու «9-րդ հեռուստաալիքն» է: Եթե այդպես է, ապա դժվար թե վրացական իշխանությունները կարողանան բացատրել, թե ո՞րն է տարբերությունը «ընտրակաշառք» ալեհավաքի եւ Վրաստանի նախագահի կողմից ջավախքցիներին տրված ու այդպես էլ չիրագործված խոստումների տարբերությունը, թեկուզ, օրինակ, այդ տարածաշրջանի կարտոֆիլը վրացական բանակի համար ձեռք բերելու հարցում:

Ինչեւէ, վրացական առաջատար հեռուստաընկերություններ «Ռուստավի-2»-ը, «Իմեդին», «Մզեն» էլ, որ ժամանակի հեղափոխական լրատվամիջոցներից արդեն քանի տարի վերածվել են Վրաստանի նախագահի PR գործընկերների, պահանջել են, որ այդ ալեհավաքներով իրենց հեռարձակումը դադարեցվի, մի բան, որ արտառոց է որեւէ հեռուստաընկերության պարագայում, որի լսարանը մեծացնելուն ուղղված ալեհավաքները չեն կարող որեւէ կերպ խոչընդոտ դիտվել:

Տես էջ 4

# Թումանյանի բնակարանը՝ նվեր վիրահայոց թեմին




Թբիլիսիում Հովհաննես Թումանյանի բնակարանի չորս սենյակները նվիրաբերվել է Հայ առաքելական եկեղեցու վիրահայոց թեմին, որն արդեն ստացել է սուբյեկտի կարգավիճակ: Երեկ ասուլիսում այս մասին հայտարարել է Հայաստանի գրողների միության նախագահ **Լեւոն Անանյանը**՝ տան բանալիները հանձնելով վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին:

Անանյանը հիշեցրել է, որ Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի ընտանիքի տրամադրած 145000 ԱՄՆ դոլարով հնարավոր էր դարձել վրացի գործարարից ձեռք բերել Թումանյանի բնակարանի 6 սենյակներից 4-ը՝ այդ ամենը ձեւակերպելով Գրողների համահայկական հիմնադրամի անունից:

**Վազգեն սրբազանն** իր հերթին տեղեկացրել է, որ բնակարանը կծառայի որպես մշակութային տուն, որի բացումը կլինի աշնանը եւ կկրի Թումանյանի անունը: Վիրահայոց թեմի առաջնորդի խոսքերով՝ բնակարանի մնացյալ հատվածը, որ պատկանում է Թումանյանի ծոռնուհուն, եւս կարող է ձեռք բերվել, քանի որ այդ ուղղությամբ բանակցություններ արդեն տարվում են:

Այսպիսով վերջ դրվեցին այն բանսարկու խոսակցություններին, թե ով եւ ինչպես էր տնօրինելու Թումանյանի բնակարանի գնված հատվածը այն դեպքում, երբ Թբիլիսիում ու ընդհանրապես Վրաստանում հայ համայնքի կազմակերպվածության առումով չկա մեկ կառույց, որ կարող էր ներկայացնել ողջ հայությանը Վրաստանում: Ուստի վստահեցնենք, որ վիրահայոց թեմին նվիրաբերությունը ամենաընդունելի եւ ճիշտ տարբերակն էր այլ բոլոր կազմակերպությունների համեմատությամբ, որոնց մեծ մասը մի քանի հայերից բաղկացած կառույց են՝ անհասկանալի, երբեմն էլ կասկածելի նպատակների ծառայող:

Ա.Հ.

# «Միլանոյի» հայցը հասավ Եվրոդատարան

Աբովյան փողոցում նախկինում գործող «Միլանո» խանութի սեփականատեր Հովհաննես Ղուկասյանն այլեւս հույս չունի արդարություն գտնել Հայաստանի դատական ատյաններում եւ վերջերս դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Նա վիճարկում է «հանրային գերակա շահ» անվան տակ իր սեփականությունը օտարելու կառավարության որոշումը: Հիշեցնենք, որ խանութի տարածքը նրա ձեռքից վերցվեց 2009-ին, սակայն այս տարիներին պետությունն այդտեղ ոչ մի հանրօգուտ ծրագիր չի իրականացրել: «Միլանո» խանութի տարածքն արդեն 4 տարի ոչ մի կերպ չի օգտագործվում, ոչ մի աշխատանք այնտեղ չի կատարվում: Ընդամենը քանդվել է շենքը, եւ ո՞րն էր այս դեպքում պետական շահը՝ հայտնի չէ: Մինչդեռ պետական եւ հասարակական կարիքների համար տարածքի օտարման մասին ՀՀ օրենքի համաձայն՝ եթե օտարված տարածքում նոր սեփականատերը երկու տարվա ընթացքում չի սկսում այն ծրագրի իրականացումը, որի համար օտարվել է տարածքը, ապա նա կորցնում է իր իրավունքը, եւ հողը վերադարձվում է նախկին տիրոջը: Հենց այս օրենքի համապատասխան հոդվածով էլ հիմնավորվում է միջազգային դատական ատյանին ուղղված հայցը:

*Ձեռնարկատեր Հովհաննես Ղուկասյանի մամուլի կենտրոն*

**ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆՔ ՀԱՊԱՂԵԼՈՒ**

# Վարդան Օսկանյանը Սիրիայում քաղաքացիական պատերազմի վտանգ է տեսնում

**ՀՀ նախկին արտգործնախարար, ԲՀԿ-ական պատգամավոր Վարդան Օսկանյանը Facebook-ի իր էջում արված գրառման մեջ Սիրիայում լայնածավալ քաղաքացիական պատերազմի վտանգ է տեսնում՝ նկատի առնելով Սիրիայի էթնիկ եւ կրոնադավանական կառուցվածքը, ինչպես նաեւ ուժերի դասավորությունն այս պահին. «Սիրիայում այսօր մոտ 60 հազար հայ է ապրում, որից 45 հազարը՝ Հալեպում: Հալեպի հայ համայնքը «մայր համայնք» է կոչվում, որովհետեւ Ցեղասպանությունից հետո կազմավորված առաջին համայնքն է եղել, որտեղից հետագայում ճյուղավորվել են տարբեր այլ համայնքներ Մերձավոր Արեւելքում եւ այլուր: Առաջին օրվանից համայնքը ոչ միայն գոյատեւել է, այլեւ բարգավաճել եւ դարձել Սփյուռքի ամենակենսունակ եւ հյուրընկալ հայկական կենտրոններից մեկը: Հայաստան-Սփյուռք հարաբերություններում սիրիահայերը, հատկապես Հալեպի համայնքը, միշտ եղել են առաջատար դիրքերում: Այսօր սիրիահայ համայնքի գոյությունը լուրջ վտանգի տակ է: Անկանխատեսելի է, թե ինչ զարգացումներ կլինեն: Թե՛ խորհրդային շրջանում, թե՛ հատկապես Հայաստանի անկախությունից հետո հայաստանցի պաշտոնյաների, մտավորականների, գեղարվեստական խմբերի եւ առեւտրականների այցելության ամենասիրված, հաճելի եւ շահավետ վայրերից մեկն է եղել Հալեպը: Լինելով հալեպցի՝ ես բնականաբար կապի մեջ եմ այնտեղի ընկերներիս եւ հարազատներիս հետ: Երեկ մի զրույցի ընթացքում իմացա, որ վերջին առնվազն ութ ամիսների ընթացքում Հայաստանից որեւէ պաշտոնյա չի այցելել Հալեպ կամ Սիրիա: Մի խոսքով՝ համայնքը թողնված է սեփական հույսին: Հալեպի միությունները, կազմակերպությունները, համայնքն ընդհանրապես իրենց թիկունքում չեն զգում հայրենի պետության զորակցությունը: Ես կարծում եմ, որ թեկուզ ուշացումով, բայց այս թերացումը պետք է շատ արագ ուղղել, քանի որ իրավիճակն օրեցօր բարդանում է, եւ համայնքը չգիտի՝ իրեն ինչ է սպասում: Պաշտոնական Երեւանը մի քանի անհապաղ քայլեր պետք է ձեռնարկի:**

**Նախ, Անվտանգության խորհրդի նիստ պետք է հրավիրի եւ կողմնորոշվի, թե զարգացումների ինչ սցենարներ կարող են լինել եւ դրանցից յուրաքանչյուրի դեպքում ինչ աջակցություն կարելի է տրամադրել Սիրիայի հայ համայնքին:**

**Երկրորդ, առանց որեւէ հրապարակայնության՝ նախագահի կողմից լիազորված անձ պետք է մեկնի Հալեպ, համախմբի այնտեղ գործող հայկական կուսակցությունների, կազմակերպությունների ներկայացուցիչներին, կրոնական հարանվանությունների առաջնորդներին, լսի նրանց, որի արդյունքում համատեղ ծրագիր պետք է մշակվի ոչ ցանկալի զարգացումների դեպքում համապատասխան քայլեր ձեռնարկելու եւ համայնքի վնասները նվազագույնի հասցնելու համար: Հայաստանի պետությունն իրավունք չունի հապաղելու», նշում է Վարդան Օսկանյանը:**

Մ. Խ.

# Աֆրիկացիները Հայաստանում՝ Եվրոպա գնալու համար

## *Նրանց մուտքը կսահմանափակվի եւ կլինի միայն հրավերի առկայության դեպքում*

**Ազգային անվտանգության ծառայությունը կառավարության որոշման նախագիծ է պատրաստել, որն ուղղված է ապօրինի միգրացիայի դեմ: Բանն այն է, վերջին ժամանակներս արձանագրվել է աֆրիկյան մայրցամաքի պետությունների քաղաքացիների կողմից Եվրոպա մեկնելու համար Հայաստանի Հանրապետության տարածքը որպես տարանցիկ գոտի օգտագործելու փորձերի աճ: Նշված անձինք ժամանում են Հայաստանի Հանրապետություն, գտնվում են այստեղ անօրինական կերպով կամ ձեւական ստեղծված ֆիրմաների միջնորդության հիման վրա փորձում են ստանալ կացության ժամանակավոր կարգավիճակ: Դրա հետեւանքով նրանց հոսքը կարող է դառնալ անկառավարելի եւ ստեղծել բազմաթիվ խնդիրներ, ինչպես սոցիալական, դեմոգրաֆիական, առողջապահական (հաշվի առնելով նշված երկրներում ՁԻԱՀ-ի եւ այլ սուր վարակիչ հիվանդությունների տարածվածությունը), այնպես էլ քրեածին բնույթի:**

**Այդ երկրների քաղաքացիները հնարավորություն ունեն ժամանելու Հայաստանի Հանրապետություն եւ առանց որեւէ խոչընդոտի պետական սահմանի անցման կետերում ստանալու մուտքի վիզա: Կառավարության որոշմամբ վերոնշյալ 40 պետությունների քաղաքացիները ՀՀ մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ եւ հյուպատոսական հիմնարկներ եւ միայն հրավերի հիման վրա ժամանել Հայաստանի Հանրապետություն: Որոշումը վերաբերելու է հետեւյալ աֆրիկյան երկրների քաղաքացիներին եւ ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձանց՝ Անգոլա, Քենիա, Եթովպիա, Տանզանիա, Ուգանդա, Զամբիա, Հասարակածային Գվինեա, Բոթսվանա, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Գաբոն, Սենեգալ, Նամիբիա, Կոնգո, Մոզամբիկ, Մավրիտանիա, Մալի, Բուրկինա Ֆասո, Մադագասկար, Չադ, Զիմբաբվե, Բենին, Ռուանդա, Մալավի, Գվինեա, Սվազիլենդ, Տոգո, Լեսոտո, Էրիթրեա, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Կաբո Վերդե, Բուրունդի, Ջիբութի, Գամբիա, Լիբերիա, Սեյշելյան կղզիներ, Գվինեա Բիսաու, Կոմորյան կղզիներ, Սան Տոմե եւ Պրինցիպի, Սուրբ Հեղինեի կղզի, Հարավային Սուդան:**

Ա. Մ.

# Հայ ժողովրդի ցեղասպանության մասին՝ ամերիկյան Military Channel ալիքով

**«Ազգ»-ի նախկին աշխատակից Անուշ Գալստյանը Մ. Նահանգներից տեղեկացնում է, որ նախորդ գիշեր ամերիկյան հեռուստատեսության Military Channel ալիքով, ժամը 1-2-ը ցուցադրվել է «Առաջին համաշխարհային պատերազմը» (The First World War: Turkey ties up Allied troops for four years) վավերագրական ֆիլմը, որտեղ զգալի մի հատված անդրադարձավ հայ ժողովրդի տեղահանությանն ու կոտորածներին, օգտագործելով Genocide բառը: Ցուցադրվել են արխիվային լուսանկարներ եւ տեսապատկերներ, Թուրքիայում այն ժամանակ գործող օտարերկրյա դիվանագետների վկայությունները:**

# Մարտական կեցվածքն ու աջուձախ պիտակներ կպցնելը հարիր չեն պաշտոնական լրատվությանը

## *Շիրակի մարզպետարանի կայքէջի որոշ հրապարակումների շուրջը*

Շիրակի մարզպետարանի արդեն մի քանի տարի գործող կայքէջը անցած ամբողջ ժամանակամիջոցում բավական հաջող է ծառայել որպես մարզային տեղեկատվության պաշտոնական աղբյուր, նաեւ աչքի ընկել մատուցվող տեղեկատվության շարադրանքի զուսպ ու հավասարակշռված ոճով: Ահա թե ինչու, այս տարվա մարտի վերջին «**Ազգ**»-ում արձագանքելով մարզի մի շարք համայնքներում կայացած ՏԻՄ ընտրությունների վերաբերյալ կայքի անսովոր, ՀՀԿ-ի ենթադրյալ ընդդիմախոսներին «ոչնչացնող» անընդունելի որակումներով լի հրապարակմանը, շտապել էինք նկատել, թե դա հատուկ չէ սույն կայքէջի ոճին ու երեւի ինչ-որ թյուրիմացության արդյունք է:

Պարզվում է՝ թյուրիմացություն այնուամենայնիվ չկա: Հունիսի 17-ին Գյումրու տեքստիլագործների մշակույթի պալատում տեղի ունեցած՝ երկրաշարժից անօթեւան ընտանիքների բնակբաշխման հերթական վիճակահանության մասին մարզպետարանի տեղեկատվության մեջ էլ փորձ է արվում պետական մարմինների այս անգամ վատ կազմակերպած վիճակահանության մեղքը գցել գործընթացին աջակցող, նաեւ դրա հրապարակայնությունն ապահովող հասարակական կազմակերպության՝ «Շիրակ կենտրոնի» վրա: Տեղեկատվության հեղինակն անհասկանալի արհամարհանքով է արտահայտվել բավական գործ կատարած կազմակերպության ու նրա ղեկավարի հասցեին, չնայած հաղորդման վերջում ներկայացնում է երկսենյականոց բնակարանների շահառուների... հենց այս ՀԿ-ի տրամադրած ցուցակը:

Ցավոք, նման մոտեցումներն արդեն կարծես հավակնում են տիրապետող դառնալ մարզպետարանի էլեկտրոնային էջի հրապարակումներում: Ինչպես հայտնի է, ՀՀ մարզերի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծմանն ուղղված աշխատանքների համար կառավարությունն իր պահուստային ֆոնդից այս տարի հատկացրել է երրորդ 10 մլրդ դրամը: Դրանից հերթական 1 մլրդ 320 մլն-ը բաժին է հասել Շիրակի մարզին: Ինչպես նախորդ երկու տարիներին, այս անգամ էլ ծրագրով ուշադրության կենտրոնում են մարզի տարբեր բնակավայրերի դպրոցական օջախների, համայնքային, մշակութային կենտրոնների, նախադպրոցական հաստատությունների, որոշ թվով ճանապարհների նորոգման, կառուցման խնդիրները: Կատարվող աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով հունիսի 19-ին Շիրակի մարզպետը աշխատանքային շրջայց է կատարել: Այդ մասին կայքէջի «Նորություններ» բաժնի նույն օրվա հրապարակման վերջում հեղինակը հարկ է համարել մի հետգրություն անել եւ ի՞նչ է գրել: Ահա. «Բոլոր նրանց, ում տկար ուղեղի եւ հիվանդ երեւակայության համաձայն Շիրակի մարզպետը նշանակման օրվանից արձակուրդում է, տեղեկացնենք. Շիրակի մարզպետը նշանակման օրվանից աշխատել է առանձնահատուկ նվիրվածությամբ...», եւ այլն:

Ի՞նչ տկար ուղեղ, ի՞նչ հիվանդ երեւակայություն, եւ սա ի՞նչ պաշտոնական տեղեկատվություն է...

Բոլոր դեպքերում չխորանալով երեւույթի մեջ եւ համարելով, որ բոլորս էլ որպես մարդ սխալական ենք, այստեղ ստիպված ենք մարզպետարանի մեր հարգարժան գործընկերներին ու ընդհանրապես այլ ղեկավար մարմինների աշխատողներին եւս հիշեցնել հետեւյալը: Ժողովրդավարական համարվող երկրում տարբեր մակարդակի կառավարողները, ընտրվելով ժողովրդի կողմից կամ նշանակվելով պետական կառավարման մարմնի կողմից, իրականացնում են ոչ թե իրենց կամ իրենց նշանակողի, այլ հենց ժողովրդի իշխանությունը: Եվ որպես այդպիսին նրանք ոչ թե ինքնակալ իշխաններ ու տիրակալներ են, այլ ընդամենը կոչված են ժողովրդին ծառայություն մատուցելու: ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, անկախ նրա իշխանության մասին մեր կարծիքից, ժամանակին մոտավորապես հետեւյալ ճշմարիտ միտքն է հայտնել, թե՝ նա, ով իշխանություն է ստանձնում, պետք է պատրաստ լինի իր հասցեին ե՛ւ օրհնանք, ե՛ւ հանդիմանանք լսելու: Պետական տարբեր մակարդակների ղեկավարներն ու նրանց աշխատակազմերը նաեւ պահվում, աշխատավարձ են ստանում հարկատուների, այսինքն՝ նույն ժողովրդի վճարած հարկերի հաշվին: Եվ հարկատուն միշտ իր պահած պաշտոնյայից պահանջելու, նրա աշխատանքի գնահատականը տալու ու նրան նաեւ քննադատելու իրավունք ունի:

Եթե մարզպետը, մեկ ուրիշ պաշտոնյա լավ է աշխատում, նրան պաշտպանողն իր արած գործը պետք է լինի եւ կլինի: Իսկ կատարված աշխատանքի մասին մարզպետարանի կամ որեւէ այլ պետական մարմնի, նրա կայքէջի տեղեկատվությունն ընդամենը պաշտոնական հաղորդագրություն, ընդգծում եմ՝ հաշվետվություն պետք է լինի: Առանց նշված կարգի ավելորդությունների:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ



# Վրաց իշխանությունը Ջավախքում ընդդիմադիր չի հանդուրժում

*3-րդ էջից*

**Սրանով, իհարկե, հակաիվանիշվիլիական քայլերը չեն ավարտվում. վրացական Վերահսկիչ պալատը մեկ խախտումներ է բացահայտում հենց ընդդիմադիր կուսակցության քայլերում, մեկ արգելանքի պահանջ ներկայացնում միլիարդատիրոջ բաժնետոմսերի նկատմամբ եւ այդպես շարունակ: Իսկ այս ամենի կապը Ջավախքի հետ այնքանով է իրական, որ Իվանիշվիլու անվանն առնչվող ամեն ինչ Ջավախքում էլ հայտնվում է «արգելանքի» տակ:**

**Օրերս «Վրացական երազանքի» Ախալքալաքի գրասենյակի ղեկավար Գեորգի Ժվանիան (այդպես էլ չպարզված հանգամանքներում մահացած, Սաակաշվիլու «թիմակից», Վրաստանի նախկին վարչապետ Զուրաբ Ժվանիայի եղբայրը - Ա. Հ.) բարձրաձայնեց ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում իշխանական ճնշումների մասին: Ժվանիան եւս հաստատել է, որ տարիներ շարունակ այս տարածաշրջանները Վրաստանի իշխանության համար «ընտրական ձայների գանձարան են»:**

**Փաստերից մեկն էլ Ախալքալաքում «Վրացական երազանքին» գրասենյակ տրամադրած Գեորգի Մխչյանի ձերբակալությունն է հունիսի 24-ի գիշերը, այն էլ անհեթեթ մեղադրանքով, թե վարձակալության համար տրամադրված գրասենյակն իրեն չի պատկանել մոտ 7 տարի առաջ, այլ Վրաստանի իշխող «Ազգային շարժում» կուսակցությունից մինչեւ 2008-ը երկու գումարման պատգամավոր Մելիք Ռաիսյանին, այսինքն՝ իբր գրասենյակի շենքի սեփականաշնորհման ժամանակ փաստաթղթեր են կեղծվել, որոնց հետ, սակայն, Մխչյանը ոչ մի կապ չունի՝ որպես երրորդ գնորդ: Եվ այս ամենը Ախալքալաքի ոստիկանապետ Սամվել Պետրոսյանի անվան հետ զուգակցված այն համատեքստում, որ վերջինս մինչեւ գրասենյակը վարձակալությամբ տրամադրելը արդեն իսկ սպառնացել է Մխչյանին, թե գրասենյակ տրամադրելու դեպքում կձերբակալի:**

**Հիշեցնենք, որ Սամվել Պետրոսյանի առնչությամբ «Ազգի» ընթերցողները տեղեկացված են նաեւ ջավախահայ քաղաքական ակտիվիստ, 10 տարվա ազատազրկման դատապարտված Վահագն Չախալյանի գործով, որում Պետրոսյանն ու իր որդին վերջին դերակատարներից չեն՝ մեղադրանքների որոշ հատվածը «հիմնավորելու առումով», թեեւ վրացական դատական ատյաններում երկուսն էլ չներկայացան ցուցմունք տալու ու հարցերի պատասխանելու:**

**Ժվանիան հայտարարել է, որ ինչպես Մելիք Ռաիսյանի, այնպես էլ Գեորգի Մխչյանի դեմ ճնշումները, այն էլ «խմբակային հանցագործության» մեղադրանքով, սկսվել են, երբ երկուսն էլ հայտարարել են «Վրացական երազանքին» միանալու մասին: Ավելին, եթե Մխչյանին ձերբակալել են, ապա Ռաիսյանին դեռեւս մայիսի վերջին հետախուզում են հայտարարել անձնական հարցերով Վրաստանից մեկնելուց հետո, բայց մինչ այդ Ռաիսյանը կանչվել է իշխող կուսակցության գրասենյակ ու զգուշացվել, որ «Վրացական երազանքին» անդամակցելու դեպքում «խնդիրներ կունենա»: Արդյունքում հետախուզում է հայտարարվել մայիսի 25-ին արդեն իսկ «Վրացական երազանքին» անդամակցած Ռաիսյանի նկատմամբ, ու այդպես Ռաիսյանն էլ առայժմ չի կարող վերադառնալ Վրաստան:**

**Չախալյանի գործի առնչությամբ վրացական իրավապահ ուժերի ու արդարադատության աշխատանքին ծանոթ լինելով բնավ էլ զարմանալի չէ, որ ինչպես Մխչյանի, այնպես էլ Ռաիսյանի պարագայում «հարյուր տարվա մեռելներ» են պեղվել ու հիմա փորձում են «թաղել», այն էլ հենց նախընտրական շրջանում եւ հենց այն պահին, երբ նրանք երկուսն էլ նախընտրել են համագործակցությունը ընդդիմադիր ներկայացող ուժի հետ:**

**Վրացական իշխանությունների համար ազգային փոքրամասնությունների ձայները մշտապես երաշխավորված «կողմ» քվեարկություն են եղել, ու եթե այդ տխուր ավանդույթը խախտվի՝ 99 տոկոս մասնակցության ու 99 տոկոս «կողմ» ձայների բացակայությունը կարող է «խաթարել» ընտրական ողջ արդյունքը: Ուստի գործի են դրվում բոլոր հնարավոր միջոցները՝ նաեւ հենց ջավախքցիների մասնակցությամբ ու ձեռամբ:**

**Ցավալի է:**

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Նրանց 10 տարիների երազանքն այսօր դառնում է իրականություն

1998 թվականի մայիսին, երբ երեխաներն առաջին անգամ ոտք դրեցին **Խորեն** ու **Շուշանիկ Ավետիսյանների** անվան կրթահամալիրի մանկապարտեզը, հավաքված աշխատակազմը չէր էլ պատկերացնում, որ տարիների ընթացքում ունենալու են մեծ հաջողություններ, հիմնվելու է կրթահամալիրի դպրոցը, եւ այս տարի լինելու է արդեն նոր շենքի հիմնարկեքը: Կրթահամալիրի նոր շենքում, որը կառուցվելու է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Բաբաջանյան 42/7 հասցեում, կբացվի նաեւ ավագ դպրոցը:

Թեեւ «Հայ կրթություն» հիմնադրամը կամ, ինչպես ընդունված է ասել, Խորեն ու Շուշանիկ Ավետիսյանների անվան կրթահամալիրն ունի ավագ դպրոցի լիցենզիա, սակայն շենքային սահմանափակ պայմանների պատճառով չունի ավագ դպրոց, եւ 9-րդ դասարանն ավարտելուց հետո երեխաներն ավագ դպրոցի կրթությունը շարունակում են ուրիշ դպրոցներում: Սակայն նոր շենքի կառուցումից հետո կբացվի եւ ավագ դպրոցը: Թեմային «**Ազգը**» եւս մի անգամ անդրադարձել է հունիսի 22-ի համարում:

Հուրախություն աշակերտների, մանկավարժների, ծնողների եւ այլոց, ովքեր ամսի 22-ին հավաքվել էին Բաբաջանյան 42/7 հասցեում, եղավ «Հայ կրթություն» հիմնադրամի նոր շենքի հիմնարկեքը:

«Հայ կրթություն» հիմնադրամի հիմնադիրը Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցությունն է, եւ նոր շենքի կառուցումն էլ ստանձնել է ընկերակցությունը՝ բարերարությամբ **Էդուարդ** ու **Պամելա Ավետիսյանների**, որոնք նույնպես ներկա էին հիմնարկեքին:



Էդուարդ Ավետիսյանն ասում է՝ շենքի կառուցումն ու ավագ դպրոցի բացումը 10 տարիների երազանք է, ինչն այսօր իրականություն է դառնում: Դպրոցն ունենալու է ամենաարդի տեխնոլոգիաները, որոնք մշակել են հայ գիտնականները: Շենքը կունենա նաեւ լաբորատորիա, որտեղ հավաքվելու ու քննարկումներ են կազմակերպելու ճարտարապետները, ճարտարագետները եւ ուրիշ ոլորտների մասնագետները: Եվ շնորհիվ կրթության մեջ արդեն իսկ ձեռք բերված բարձր մակարդակի, որը հետագա տարիներին էլ պահպանվելու եւ խթանվելու է, Ավետիսյան կրթահամալիրի շրջանավարտները կունենան գերազանց միջնակարգ կրթություն:

«Ու շնորհիվ այս ուսման Հայաստանը պետք է լինի ավելի ուժեղ ու ապահով», ավելացրեց ամերիկահայ բարերար Էդուարդ Ավետիսյանը, որին համակարծիք է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ղեկավար **Դավիթ Օհանյանը**:

«Համոզված եմ, որ այս դպրոցում սովորելու են Հայաստանի ապագա պետական այրերը», ասաց Դավիթ Օհանյանը:

Պարոն Օհանյանը նշում է, որ Հայ ավետարանչական ընկերակցության հետ իրենց վարչական շրջանի համագործակցությունը սկսվեց 1990-ական թվականներից, երբ համայնքի ավագանին որոշեց մի մանկապարտեզ անհատույց տրամադրել ընկերակցությանը, ինչի համար պարոն Օհանյանը բնավ չի ափսոսում, այլ հակառակը:

Հիմնարկեքի արարողությունը ներկաների, մանավանդ երեխաների ու մանկավարժների համար վերածվել էր տոնակատարության:

«Անհամբեր կսպասենք առաջին զանգին նոր կառուցված դպրոցում», ասաց ծնողական խորհրդի նախագահ տիկին **Մեսրոպյանը**: Իսկ աշակերտները խոստացան՝ թե՛ դպրոցում, թե՛ դպրոցից դուրս մշտապես լավ սովորել:

«Հայ կրթություն» հիմնադրամ երեխաները հաճախում են 3 տարեկանից՝ սկզբում մանկապարտեզ, իսկ 6 տարեկանից փոխադրվում են դպրոց:

Ներկաները համոզված էին՝ ավագ դպրոցն էլ կարդարացնի սպասվելիք հույսերը:

«Ավետիսյան կրթահամալիրը պետք է պատրաստի Հայաստանի ապագա առաջնորդներ, ու պետք է ամեն ինչ անենք, որպեսզի սա դառնա լավագույն դպրոցը Հայաստանում», ավելացրեց Հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղի տնօրեն **Հարութ Ներսեսյանը**:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

# 89 անուն քաղբանտարկյալ կներկայացվի Ադրբեջանին

## *Աշնանը ԵԽԽՎ-ն կքննարկի այդ հարցը, ու թերեւս առավել հստակ դառնա, թե ովքեր են նախընտրում Ադրբեջանից բերված ձկնկիթը*

Որքա՞ն ձկնկիթ է ամառային այս նստաշրջանի ընթացքում տարվել Ստրասբուրգ, որտեղ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը հավաքվել ու հարցեր է քննարկում, թերեւս ակնհայտ դառնա, երբ ԵԽԽՎ պատվիրակները քվեարկեն Ադրբեջանին առնչվող զեկույցը, որ վեհաժողովի նստաշրջանի երկրորդ օրը երկու առանձին քննարկումներով արդեն անցել է վեհաժողովի իրավական ու մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովով:

Հանձնաժողովն ընդունել է «քաղբանտարկյալ» սահմանման մասին Քրիստոֆեր Շտրասերի պատրաստած զեկույցը, որին, ի դեպ, այդպես էլ Ադրբեջանը թույլ չտվեց այցելել երկիր: Հանձնաժողովն ավելի ուշ՝ զուտ ադրբեջանցի քաղբանտարկյալների առնչությամբ զեկույցը եւս ընդունել է, ինչը փաստացի հնարավոր դարձրեց աշնանային նստաշրջանում վեհաժողովի մակարդակով քննարկման դնել ներկայացված փաստաթուղթը: Այդպիսով այն դարձավ վեհաժողովի աշնանային նստաշրջանի օրակարգային հարց, որի քննարկումը կընդունվի բանաձեւի ընդունմամբ:

Հատկանշական է, որ ԵԽԽՎ-ում Ադրբեջանի պատվիրակության ղեկավար Սամեդ Սեիդովը զեկույցն ադրբեջանցի լրագրողներին ներկայացրել է որպես «ընդհանրական զեկույց քաղբանտարկյալների մասին, այլ ոչ զուտ Ադրբեջանի մասով», թեեւ չէր կարողացել բացատրել, թե ինչու են այդ դեպքում նշված հանձնաժողովի անդամ ադրբեջանցի պատվիրակները դեմ քվեարկել:

Սեիդովի «բացատրությանն» ի հակադրություն, իրողություն է, որ բացառապես Ադրբեջանում քաղբանտարկյալների հարցին առնչվող զեկույցը եւս կանաչ լույս ստացավ վեհաժողովում ներկայացվելու համար, ասել է թե մի մեծ խմբաքանակ ձկնկիթ էլ մինչեւ աշնանային նստաշրջանն ու դրա ընթացքում տեղ կգտնի որոշ վեհաժողովականների տունդարձի ճամպրուկներում: Ի դեպ, ձկնկիթ «բաժանում են» երեւի նաեւ ադրբեջանական հասարակական կազմակերպություններին, քանի որ մինչ ԵԽԽՎ մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովը կքննարկեր գերմանացի զեկուցողի պատրաստած փաստաթղթերը, ադրբեջանական աղբյուրների վկայությամբ, վեհաժողովում տարածվել էր Ադրբեջանի 30 ՀԿ-ների հայտարարությունը, թե «Շտրասերի զեկույցն օբյեկտիվ չէ, քանի որ նա չի այցելել Ադրբեջան»: Մինչդեռ 2009-ին քաղբանտարկյալների հարցերով զեկուցող նշանակված Շտրասերի մուտքը ադրբեջանական իշխանություններն ամեն գնով մերժել են, անգամ անհեթեթ պատճառաբանություններով, թե, օրինակ, նա իբր ճիշտ չի լրացրել մուտքի արտոնագիր ստանալու դիմումը:

«Քաղբանտարկյալի սահմանումը» զեկույցը, որ ընդգրկում է նաեւ ադրբեջանցի քաղբանտարկյալների պատմությունները, փաստացի ԵԽԽՎ շրջանակներում առաջին փորձն է անդրադառնալու այդ հասկացությանը, որ թեեւ կիրառվում էր հստակեցված որոշակի դրույթների հաշվառմամբ, սակայն դեռեւս սահմանում չուներ: Ընդհանրական զեկույցը ԵԽ անդամ բոլոր երկրներին կոչ է անում նախ ինքնուրույնաբար կիրառել այդ սահմանումը ու բացահայտել իրենց տարածքում այն կալանավորվածներին, որոնց վերաբերող հանգամանքները տեղավորվում են ձեւակերպման մեջ: Այս համատեքստում Հայաստանն էլ առանձնակի հրճվելու առիթներ չունի, ու թեեւ հայաստանյան իրողությունների առնչությամբ այդպես էլ որեւէ ԵԽԽՎ-ական հարթակում չի արձանագրվել «քաղբանտարկյալ» ձեւակերպումը, փաստ է, որ մենք էլ մտածելու բան ունենք ու լուծելու խնդիրներ:

Ինչեւէ, աշնանային նստաշրջանի ուղեգիր ստացած զեկույցի հեղինակը ամառային նստաշրջանում քննարկումների օրը նաեւ ասուլիսում առանձնակի նշեց, որ 3 տարվա ընթացքում այդպես էլ ադրբեջանական իշխանությունները իրեն հնարավորություն չտվեցին փաստահավաք առաքելություն իրականացնելու, դրա համար էլ նախապես միայն Ադրբեջանում քաղբանտարկյալների հարցով զեկույց պատրաստելու փոխարեն գերմանացի պատգամավորը փորձել է նաեւ սահմանել քաղբանտարկյալ հասկացությունը՝ ընդհանրական մոտեցմամբ: Ըստ Շտրասերի, զեկույցին դեմ քվեարկողներից է եղել նաեւ քանիցս մարդու իրավունքներից ճառած ԵԽԽՎ նախկին նախագահ Մեւլութ Չավուշօղլուն: Այդ հանգամանքն, ըստ զեկուցողի, բավականին արտառոց է:

Զեկույցին փաստացի դեմ է կանգնել նաեւ Ադրբեջանի հարցով զեկուցող Պեդրո Ագրամոնը, որի դեմ, ինչպես արդեն տեղեկացրել է «Ազգը», ԵԽԽՎ նախագահին բողոքի նամակ է ուղարկել նաեւ ադրբեջանական ընդդիմությունը՝ պատճառաբանությամբ, թե նա օբյեկտիվ չի ներկայացնում մարդու իրավունքներին առնչվող իրավիճակը Ադրբեջանում:

Շտրասերի տեղեկացմամբ՝ Ադրբեջանում քաղբանտարկյալների մասին զեկույցում արդեն նշվում է 89 անուն, որոնք ներկայացվելու են Ադրբեջանի իշխանություններին:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Չինաստանը 10 մլրդ դոլար կհատկացնի հարավամերիկյան երկրներին

Չինաստանի վարչապետ Վեն Ցզյաբաոն Չիլիում առաջարկել է 10 մլրդ դոլարի վարկային գիծ բացել հարավամերիկյան երկրների ենթակառույցներին օժանդակելու նպատակով: Այդ մասին հաղորդում է BBC-ն:

«Սանտյագո թայմս» թերթը հավելում է, որ լատինամերիկյան երկրներում վեցօրյա ուղեւորության ավարտից հետո Ցզյաբաոն նաեւ առաջարկել է ստեղծել արդյունաբերական զարգացման հատուկ հիմնադրամ: Նա նպատակահարմար է գտնում ազատ առեւտրի համաձայնագիր կնքել Չինաստանի եւ Հարավամերիկյան ընդհանուր շուկայի (Mercosur) երկրների միջեւ:



Ցզյաբաոյի այցն ավարտվել է Չիլիի մայրաքաղաքում, որտեղ նա առեւտրական 11 համաձայնագիր է ստորագրել Չիլիի նախագահ Սեբաստիան Պինեյրայի հետ: Կողմերը որոշել են մինչեւ 2015 թ. իրենց առեւտրաշրջանառությունը հասցնել 60 մլրդ դոլարի:

Ամբողջ Լատինական Ամերիկայի մասշտաբով Չինաստանը որոշել է առաջիկա 5 տարում առեւտրի ծավալը հասցնել 400 մլրդ դոլարի:

Ինչ վերաբերում է ավելի վաղ հատկացված վարկերին, 2009-ին Չինաստանը համաձայնել էր մինչեւ 10 մլրդ դոլար տրամադրել Աֆրիկայի երկրներին:

ԴԱՄԱՍԿՈՍ

# Ասադ. «Սիրիայում իսկական պատերազմ է»

**Սիրիայի նախագահ Բաշար Ասադը խոստովանել է, որ ներկայումս երկրում տեղի է ունենում «իսկական պատերազմ»: Այդ մասին հաղորդում է Սիրիայի պետական SANA գործակալությունը:**

**Ինչպես նշվում է հաղորդագրության մեջ, Ասադը համապատասխան հայտարարությունն արել է երկրի նոր կառավարության առաջին նիստում: Նախագահը կառավարությունից պահանջել է բոլոր միջոցները գործի դնել պատերազմում հաղթանակի հասնելու համար:**

**Ռոյթեր գործակալությունը հիշեցնում է, որ մինչեւ վերջերս Ասադը երբեք չէր խոսում Սիրիայի պատերազմի մասին. նա պաշտոնական մակարդակով հայտարարում էր, թե գործող կառավարության դեմ կռվում են միայն զինյալների առանձին խմբեր, որոնք ֆինանսավորվում են արտասահմանից:**

**Ֆրանսպրես գործակալությունը իրավապաշտպանական Syrian Observatory for Human Rights կազմակերպությանը վկայակոչելով հաղորդում է, որ Սիրիայում երեքշաբթի օրը սպանվել են 68 խաղաղ բնակիչ, կառավարական բանակի 41 զինվոր եւ 7 ապստամբ: Այդ օրը մարտերի հիմնական շրջանն էին դարձել Դամասկոսի Կուդսայա եւ Ալ Համա արվարձանները:**

**Սիրիական ընդդիմությունը Դամասկոսի արվարձաններում մղված կատաղի մարտերի վերաբերյալ հաղորդում է, որ «Սիրիայի ազատ բանակի» ներկայացուցիչներին հաջողվել է զենիթային հրթիռով խոցել մեկ ռազմօդանավ, ինչպես նաեւ ոչնչացնել կառավարական զորքերի 6 տանկ:**

**SANA պաշտոնական գործակալությունն իր հերթին հաղորդում է, որ մայրաքաղաքի արվարձանում «ահաբեկիչները հարձակվել են քաղաքացիական եւ ռազմական օբյեկտների վրա», եւ որ գվարդիականները կարողացել են հետ մղել հարձակումը, ոչնչացնելով «տասնյակ ելուզակների» եւ ձերբակալելով բազմաթիվ ուրիշների: Ձերբակալվածների թվում կան օտարերկրացիներ, պնդում է SANA-ն: Կառավարական աղբյուրները չեն մեկնաբանում խոցված ռազմօդանավի եւ ոչնչացված տանկերի վերաբերյալ ապստամբների տարածած տեղեկությունները:**

# Քրեական գործ Եգիպտոսի նախկին վարչապետի նկատմամբ

**Եգիպտոսի նախկին վարչապետ, նախագահության նախկին թեկնածու Ահմեդ Շաֆիկի նկատմամբ քրեական գործ է հարուցվել կաշառակերության կասկածանքով: Հունիսի 16-17-ը նախագահական ընտրությունների 2-րդ փուլում Շաֆիկի ախոյանը այժմ արդեն նախագահ ճանաչված Մոհամմեդ Մուրսին էր, հիշեցնում է Լոնդոնի «Թայմս» թերթը:**



**Եգիպտոսում ոմանք պնդում են, թե քրեական գործի հարուցումից հետո Ահմեդ Շաֆիկը փախել է Սաուդյան Արաբիա: Սակայն նրա զինակիցները հայտարարում են, որ նա Սաուդյան Արաբիա է մեկնել փոքր ուխտագնացության, իսկ վերադառնալուց հետո հիմնելու է քաղաքական կուսակցություն: Այդ մասին հաղորդում է «Ալ Ահրամ» թերթը:**

**Շաֆիկի գործի քննությունը վերաբերում է 2002-2011 թվականներին, երբ նա գլխավորում էր քաղաքացիական ավիացիայի նախարարությունը: 2011-ին Եգիպտոսում հեղափոխության սկզբնական փուլում նախագահ Հոսնի Մուբարաքը Շաֆիկին նշանակեց վարչապետի պաշտոնում եւ հանձնարարեց նախապատրաստել քաղաքական բարեփոխումներ:**

**Ահմեդ Շաֆիկը վարչապետի պաշտոնը թողեց Մուբարաքի տապալումից հետո, երբ ընդդիմության ելույթների նոր ալիքի մասնակիցները նրան մեղադրեցին նախկին նախագահի հետ համագործակցելու մեջ: Պաշտոնաթողությունից հետո քաղաքացիական ավիացիայի նախարարության եւ EgyptAir ավիաընկերության աշխատակիցները սկսեցին Շաֆիկին մեղադրեցին կաշառակերության եւ վատնողության մեջ: Հարուցվեց քրեական գործ, որը ներկայումս դատախազությունում է:**

**2012-ի նախագահական ընտրություններում Շաֆիկը ստացավ քվեների 48 տոկոսը, իսլամիստների թեկնածու Մուրսին՝ 52 տոկոսը:**

# Թուրքական զավեշտախաղ՝ ադրբեջանական թեմայով

**«Մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսի շրջանակներում օրերս մի հետաքրքրական որոշում է ընդունել Անկարայի թաղամասերից մեկի մունիցիպալ իշխանությունը: Մինչ օրս Թուրքիայի մայրաքաղաքի, ըստ երեւույթին արվարձանային, անանուն չորս փողոցի տրվել են անվանումներ՝ «Ղարաբաղի», «Նախիջեւանի», «Աղ-գոյունլիի» եւ «Գարա-Գոյունլիի»: Այդ մասին մեծագույն հաճույքով եւ անթաքույց հպարտությամբ գրել է ադրբեջանական մամուլը:**

**Եթե այդ փողոցներն Անկարայի համար ինչ-որ նշանակություն ունենային, ապա վաղուց կոչված կլինեին սուլթան Ֆաթիհի կամ Բայազեդի անունով: Կամ, թեկուզ՝ Թալեաթի, Էնվերի: Ադրբեջանական կողմն էլ հպարտանալու եւ հոգեկան բավարարվածության առիթ կունենար, եթե Ստամբուլի կենտրոնական պողոտաներից մեկը կոչված լիներ «Ղարաբաղի»: Կամ Թաքսիմ հրապարակին տրված լիներ Հեյդար Ալիեւի անունը:**

**Բայց եղել է այն, ինչ եղել է. Անկարայի հեշին փողոցներից մեկին տրվել է «Սպիտակ ոչխարի», մյուսին՝ «Սեւ ոչխարի» անունը: Պատմությունից հայտնի է, որ օսմանները խիստ քամահրական վերաբերմունք են ունեցել թուրքական մյուս ցեղախմբերի հանդեպ: Ամենայն հավանականությամբ, սպիտակ եւ սեւ ոչխարների անունով փողոցներ կոչելու մեջ դրա հեռավոր արձագանքը պիտի տեսնել:**

**Իսկ Բաքվում հրճվում են, երբ թուրքերն իրենց սպիտակ եւ սեւ ոչխար են կոչում: Ի՞նչ կարող ես անել՝ մարդիկ դրանից հաճույք են զգում: Բայց՝ լուրջ. մի՞թե թուրքերը դրանով հիշեցրել են, թե որտեղից են իրականում սերել այսօր իրենց Կովկասի «միակ նախաբնիկ» անվանող «ադրբեջանցիները»:**

**Երբ նույն բանը ուրիշներն են ասում, Բաքվում ինչո՞ւ են վրդովվում:**

Վ. Ա.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹՈՒՄ

# Հայտնի դարձան «Ազգային նվագարանների ու ժողովրդական երգի կատարողների մրցույթի» հաղթողները



Ազգային նվագարանների եւ ժողովրդական երգի հանդեպ ուշադրության շարունակական մեծացումը մեր մշակութային-կրթական քաղաքականության առաջնահերթություններից է, վկան արդեն 4-րդ անգամ անցկացվող «Ազգային նվագարանների եւ ժողովրդական երգի անհատ կատարողների հանրապետական մրցույթն» է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն այս տարի իր հոբելյանական ցանկում ներառել է նաեւ մեծանուն աշուղ Սայաթ-Նովայի 300-ամյակը, ՀՀ մշակույթի նախարարությունը, ՀՀ երաժշտական ընկերությունը եւ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան այս տարվա մրցույթը նվիրել են Սայաթ-Նովայի հոբելյանին: Երեք տարին մեկ անցկացվող մրցույթն ընդգրկում է հանրապետության բոլոր մարզերի, Արցախի եւ Ջավախքի երաժշտական եւ արվեստի դպրոցների, քոլեջների, բարձրագույն երաժշտական ուսումնական հաստատությունների սաներին:

Հունիսի 10-24-ն ընկած ժամանակահատվածում մրցույթի չորս անվանակարգերում՝ ժողովրդական երգ, շվի, սրինգ, դուդուկ, զուռնա, թառ, քանոն, ուդ, քամանչա, բամբիռ, հարվածային գործիքներ, պրոֆեսիոնալ ժյուրին երկու տարիքային խմբերում (մինչեւ 16 եւ 17-30 տարեկան) 133 մասնակիցներից ընտրեց 46 լավագույններին: Վերջիններիս Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը երեկ հանձնվեցին մրցանակներ, դիպլոմներ, դրամական պարգեւներ եւ ՀՀ վաստակավոր նկարիչ, քանդակագործ Դավիթ Մինասյանի հեղինակած արձանիկը:

Ձեռնարկը բացեց հանրապետական մրցույթի կազմկոմիտեի նախագահ, ժյուրիի անդամ, պրոֆեսոր **Դավիթ Ղազարյանը** եւ հատուկ շնորհակալություն հայտնեց ժյուրիի անդամներին, երաժշտական դպրոցների տնօրեններին, ուսուցիչներին, մարզպետներին մրցույթին աջակցելու համար: Ժյուրիի որոշմամբ՝ նաեւ դիպլոմների արժանացան 2-րդ փուլի մասնակիցները, որոնք մրցանակային տեղերի չարժանացան: Պրն Ղազարյանը նշեց, որ մրցույթի նկատմամբ հետաքրքրությունը մեծացել է հատկապես այն բանից հետո, երբ կառավարությունը ընդունեց որոշում ազգային նվագարանների ուսուցումը իրականացնել պետական պատվերի շրջանակներում: Այդ որոշումը խթանել է եւ բոլոր երաժշտական դպրոցներում այսօր արդեն գործում են ազգային նվագարանների դասարաններ:

Ժողովրդական երգ անվանակարգում՝ կրտսեր տարիքային խմբում 1-ին մրցանակին արժանացավ Յաշա Մովսիսյանը (Գյումրիի թիվ 19 հիմն. դպրոց), 2-րդ եւ 3-րդ տեղերը կիսեցին Գյումրիի «Գոհար» երաժշտանոցի, Արմավիրի եւ Կոտայքի մարզերի երաժշտական դպրոցի սաները: Իսկ ավագ խմբից 1-ին պատվավոր տեղը գրավեց Հայկական մանկավարժական համալսարանի ուսանող Սամսոն Պանյանը:

Շվի, սրինգ, դուդուկ, զուռնա անվանակարգում 1-ին տեղը գրավեցին Երեւանի Չայկովսկու անվան երաժշտական դպրոցի սան Հայկ Հովհաննիսյանը եւ կոնսերվատորիայի ուսանող Ոսկան Խաչբուլաղյանը:

Քամանչա, քամանի անվանակարգում՝ Սեւակ Մկրտչյանը (Գյումրի) եւ Կոտայքի մարզի Նոր Հաճընի արվեստի դպրոցի սան Հովհաննես Կարապետյանը:

Թառ, քանոն, ուդ անվանակարգում՝ Ա. Սպենդիարյանի անվան երաժշտական դպրոցի սան Գոհար Քեշիշօղլյանը (քանոն) եւ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի ուսանող Աննա Մանասերյանը (քանոն):

Կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր **Շահեն Շահինյանը** շնորհավորեց մրցույթի մասնակիցներին ու հաղթողներին եւ ժյուրիի որոշմամբ հատուկ չորս «Հույսի» մրցանակներ հանձնեց Գյումրու «Գոհար» երաժշտանոցի սան 9-ամյա Կիմա Հակոբյանին (ժողովրդական երգ), Եղվարդի արվեստի դպրոցի սան, 7-ամյա Արտուշ Սահակյանին (դուդուկ), Կանաչյանի անվան երաժշտական դպրոցի սան, 7-ամյա Դիանա Թադեւոսյանին (քանոն) եւ Գառզուի անվան արվեստի դպրոցի սան Մետաքսյա Շահբազյանը (քանոն): Երեւանի քաղաքապետարանի մրցանակներին ու դրամական պարգեւին արժանացան 4 մասնակից: Մրցույթի հատուկ մրցանակին արժանացավ կոնսերվատորիայի ուսանողուհի Աստղիկ Սնեցունցը: Մրցանակակիրները իրենց ելույթներով մեկ անգամ եւս հիացրեցին ներկաներին գալա համերգի ժամանակ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

**Կորել է** Համմիկ Ասլանյանի ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրված արտարժույթի փոխանակման կետի աշխատակցի մասնագիտական որակավորման վկայականը:
Համարել անվավեր:

*Երիտասարդ կոմպոզիտորներ եւ կատարողներ շարքից*

# Րաֆֆի Միքայելյան

***«Երաժշտությունը դա իմ աշխարհն է, որտեղ ես եմ ամեն ինչ ղեկավարում: Դիրիժորը խմբի կենարար ուժն է, ով խթանում է երաժշտության յուրովի արտահայտմանը կատարողների միջոցով»,***
*Րաֆֆի Միքայելյան*

Ինչպես խմբավար եւ դիրիժոր Հովհաննես Չեքիջյանն է ասել՝ «Ծառայել արվեստին՝ դա մասնակցություն է ժողովրդի անանց արժեքների ստեղծմանը, ծանրագույն աշխատանք մտքի եւ սրտի բարձր ոլորտներում, ուստի եւ անսահման պարտավորեցնող»: Իր խստապահանջ, քրտնաջան ու եռանդուն աշխատանքով եւ իր գործին անմնացորդ նվիրվածությամբ արվեստին է ծառայում տաղանդավոր երիտասարդ խմբավար եւ դիրիժոր Րաֆֆի Միքայելյանը:

Նա ծնվել է 1985 թ. հունիսի 12-ին Քուվեյթում: Սովորել է Բեյրութի Համազգայինի Բարսեղ Կանաչյանի անվան երաժշտական քոլեջի դաշնամուրի (Վահրամ Էմմիյանի դասարան) եւ խմբավարության (Զաքար Քեշիշյանի դասարան) բաժիններում: 2003-2007 թթ. սովորել է Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի խմբավարության բաժնում (Իվան Վարդանյանի դասարան), 2007-2010 թթ.՝ նույն բաժնի ասպիրանտուրայում, իսկ զուգահեռ սովորել է սիմֆոնիկ-օպերային դիրիժորության բաժնում (Ռուբեն Ասատրյանի դասարան): 2006-ից երգում է Հայաստանի պետական ակադեմիական, իսկ 2011-ից՝ նաեւ Երեւանի պետական կամերային երգչախմբերում: 2007 թ. երաժշտագետ Կարինե Բրուտյանի հետ համատեղ ջանքերով ստեղծել են «Գուսան» երիտասարդական կամերային երգչախումբը, որը գոյատեւեց մինչեւ 2010-ը:

2009-ից «Փարոս» կամերային երգչախմբի գեղարվեստական ղեկավարն է ու խմբավարը: Պետք է նշենք, որ երգչախումբը բազմաթիվ ելույթներ է ունեցել Հայաստանում եւ արտերկրում: 2011 թ. մայիսին համերգներով հանդես եկավ Վիեննայում, իսկ Բրատիսլավայում մասնակցելով «Musica Sacra» երգչախմբային երաժշտության VI միջազգային մրցույթփառատոնին՝ արժանացավ առավելագույն՝ երեք մրցանակի:

Ր. Միքայելյանի խմբավարական գործունեությունը եւ այդ ոլորտում նրա ձեռք բերած փորձն իսկապես արժանի է բարձր գնահատականի:

Ինչպես նշել է խմբավար Իվան Վարդանյանը՝ «Րաֆֆին առաջին կուրսից ընդունվել եւ սովորել է իմ դասարանում: Նա օժտված է երաժշտության հանդեպ մեծ սիրով, աշխատասիրությամբ, «դեպի որակ եւ պրոֆեսիոնալիզմ» նպատակասլացությամբ: Դեռ ուսանողական շրջանում ինքնուրույն անցել է պրակտիկ աշխատանքի՝ կոնսերվատորիայում ստեղծելով ուսանողական երգչախումբ, որը բազմիցս հանդես է եկել ելույթներով: Ավարտելով նաեւ սիմֆոնիկ-օպերային դիրիժորության բաժինը եւ սերտորեն միացնելով խմբավարությունն ու սիմֆոնիկ դիրիժորությունը՝ նա ձեռք բերեց այն կարեւոր, բարձր մասնագիտությունները, որոնք թույլ են տալիս նրան միաժամանակ աշխատելու «Փարոս» կամերային երգչախմբի հետ (որը ճանաչված է) եւ պետական օպերային թատրոնում որպես դիրիժոր: Րաֆֆի Միքայելյանի կերպարը որպես երաժիշտ եւ մարդ կարող է օրինակ ծառայել երիտասարդ դիրիժոր-խմբավարների համար, ովքեր պիտի որոշեն իրենց ուսման ընթացքը եւ կյանքը տանելու դեպի այդ դժվարագույն, հետաքրքրական եւ մեր ժամանակների համար շատ անհրաժեշտ մասնագիտացում»:

2010-ից Միքայելյանն աշխատում է Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական թատրոնում որպես դիրիժոր, իսկ 2011-ից նաեւ ղեկավարում է Չայկովսկու անվան դպրոցի նվագախումբը:

Տարբեր համերգներով հանդես է եկել Բեյրութի «Կարկաչ» եւ Շուշիի «Վարանդա» պարանետական երգչախմբերի հետ, Հայաստանի պետական ֆիլհարմոնիկ նվագախմբի, «Ռենեսանս» կամերային նվագախմբի, ԵՊԿ Կոնստանդին Սարաջյանի անվան սիմֆոնիկ նվագախմբի, Ալ. Սպենդիարյանի անվան պետական օպերային երգչախմբի եւ նվագախմբի հետ:

Ինչպես նշել է դիրիժոր Ռուբեն Ասատրյանը՝ «Իմ լավագույն սաներից է Րաֆֆին: Երբ եկավ ինձ մոտ եւ խորհրդակցեց ընդունելության համար, առաջին հերթին հարցրեցի թե ի՞նչ գործիքի է տիրապետում: Նա ուսման ընթացքում հասցրեց ըմբռնել եւ յուրացնել սիմֆոնիկ նվագախմբում բազմազան գործիքների նշանակությունը: Բացի դրանից հասցրեց ոչ միայն տիրապետել մանուալ տեխնիկային, այլեւ զարգացնել դիրիժորական արվեստում գիտակցական եւ ենթագիտակցական ամենակարեւոր հատկանիշները: Րաֆֆիին բնորոշ է նպատակաուղղվածությունը, հետեւողականությունը, ինչի արդյունքում այսօր մենք ունենք Հայաստանում բարձրակարգ պատրաստի օպերային-սիմֆոնիկ դիրիժոր, ով կկարողանա բարձրարվեստ, պրոֆեսիոնալ գործունեություն ծավալել»:

Ինչպես Միքայելյանն է ասել՝ «Սիմֆոդիրիժորությունն ինձ ավելի հոգեհարազատ է, բայց նաեւ մեծ բախտավորություն է խմբավար լինելը: Նվագախմբի մեջ գտնում եմ երգչախմբի ձայներ եւ հակառակը: Դրանք իրար շատ նման են եւ միաժամանակ շատ տարբեր: Առավելությունը գիտելիքների մեծ պաշարն է՝ կապված երկու ոլորտների հետ, որ ձեռք եմ բերել տարիների ընթացքում»:

Մատուցելով բարձրաճաշակ երաժշտություն, նրա նպատակն է «մաքրել, բարձրացնել մարդկանց ոգին, ունկնդրին կտրել առօրյա կյանքից ու տեղափոխել ոչ նյութական աշխարհ, որպեսզի իրեն զգա պարզ եւ ազնիվ»:



Ղեկավարելով ամենատարբեր ստեղծագործություններ, Միքայելյանը ձգտում է ճիշտ փոխանցել կոմպոզիտորի գրածը, միեւնույն ժամանակ տալով սեփական, անհատական մեկնաբանությունը: Ինչպես նա է ասում՝ «Անհրաժեշտ է քո ընկալածը ճիշտ ձեւով ցույց տալ: Պետք է հարազատ լինես ե՛ւ կոմպոզիտորի, ե՛ւ քո «ես»-ի հետ: Յուրաքանչյուր ստեղծագործության մեջ պետք է գտնել դրանց ներդաշնակությունը: Դիրիժորն ավելի շատ էներգիայի կուտակում է, որը նա պետք է խտացնի եւ տա նվագախմբին, վերջինս էլ այդ էներգիան հայելու նման պետք է անդրադարձնի եւ փոխանցի ունկնդրին»:

Եվ իսկապես, երկարատեւ փորձերի ընթացքում բոլոր ստեղծագործություններում Միքայելյանը լրջությամբ ու ամենայն մանրամասնությամբ վերլուծում եւ հաշվի է առնում յուրաքանչյուր դետալ: Այն՝ գումարվելով խմբավար-դիրիժորի խմբի հետ հիանալի փոխըմբռնմանը, տալիս է իր դրական եւ փայլուն արդյունքը, որն արդեն առավել ակնհայտ է դառնում համերգի ընթացքում:

ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆ
Երաժշտագետ, կոմպոզիտոր

# Հասմիկ Պապյանի բարեգործական համերգը Լոս Անջելեսում

**Հունիսի 22-ին Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոսության եւ «Artists for Kids» կազմակերպության համատեղ ջանքերով Փասադենայի հայտնի «The Ambassador Auditorium» դահլիճում կայացավ աշխարհահռչակ սոպրանո Հասմիկ Պապյանի համերգը, որին ներկա էին շուրջ 1200 հայ եւ օտարազգի հանդիսականներ, տեղեկացնում է արտգործնախարարության մամուլի եւ տեղեկատվության վարչությունից ստացված հաղորդագրությունը:**

**Միջազգային տարբեր մրցանակների ու կոչումների արժանացած երգչուհուն նվագակցում էր Գլենդելի Սիմֆոնիկ նվագախումբը՝ Միքայել Ավետիսյանի ղեկավարությամբ:**

**Համերգի ծրագրում ներառված էին արիաներ իտալական, գերմանական ու հայկական լավագույն օպերաներից, ինչպես նաեւ հատվածներ Կոմիտասի հայտնի գործերից:**

**Համերգին ներկա էին ամերիկյան մշակութային գործիչներ եւ Լոս Անջելեսի դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ:**

**Համերգի հասույթը հատկացվելու է շաքարախտով հիվանդ դեռահասների բուժման ծրագրին:**

ԱԶԳ

# Մարզական

## Վանես Մարտիրոսյանը պատրաստ է մենամարտելու Սաուլ Ալվարեսի հետ



ԱՄՆ-ում բնակվող պրոֆեսիոնալ բռնցքամարտիկ Վանես Մարտիրոսյանը հայտարարել է, որ պատրաստ է ձեռնոց նետել WBC-ի վարկածով առաջին միջինքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Սաուլ Ալվարեսին:

Բանն այն է, որ աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդ Վիկտոր Օրտիսը պարտվել էր Խոսեսիտո Լոոեսին` նրա հետ մենամարտում նաեւ ծնոտի կոտրվածք ստանալով: Ուստի Օրտիս-Ալվարես մենամարտը, որում աշխարհի չեմպիոնը պետք է փորձեր պաշտպանել իր տիտղոսը, չի կայանա:

Վանես Մարտիրոսյանն իր հաջորդ մենամարտն անցկացնելու է հուլիսի 7-ին ԱՄՆ-ի Կարոն քաղաքում: Նրա մրցակիցը կլինի 33-ամյա ամերիկացի Ռայան Դեւիսը: Վերջինս պրոֆեսիոնալ ռինգում անցկացրած 36 մենամարտերից 24-ում հաղթել է, 9-ում պարտվել է, 3-ն ավարտել է ոչ-ոքի: Իսկ Վանես Մարտիրոսյանը մինչ օրս պրոֆեսիոնալ ռինգում անպարտելի է` շահելով բոլոր 32 մենամարտերը: Դրանցից 20-ում նա հաղթել է նոկաուտով: Մարտիրոսյանը գտնում է, որ առաջիկա մենամարտը ոչնչով չի խանգարի Ալվարեսի հետ մրցամարտ կազմակերպելուն: Ընդհակառակը, դա կօգնի հայ բռնցքամարտիկին ավելի լավ նախապատրաստվելու չեմպիոնի հետ մենամարտին: Վանեսը հայտարարել է, որ Ալվարեսի հետ պատրաստ է մենամարտել յուրաքանչյուր երկրում, որտեղ որ կցանկանա ռինգ դուրս գալ Ալվարեսը: Վանեսը նաեւ հաղորդագրություն է ուղարկել Օսկար դե Լա Հոյային եւ Golden Boy պրոմոութերական ընկերությանը, նշելով, որ հարկավոր չէ Կանելոյի համար մրցակից փնտրել, քանի որ ինքը պատրաստ է մենամարտել նաեւ նրա հետ:

## Ադվոկատը բոլորից շատ էր վաստակում



**Պարզվում է, որ ֆուտբոլի Եվրոպայի առաջնության մասնակից հավաքականների մարզիչներից ամենաբարձր վարձատրվողը ՌԴ ընտրանու գլխավոր մարզիչ, հոլանդացի մասնագետ Դիկ Ադվոկատն է: ՌԴ ֆուտբոլային միության հետ կնքած պայմանագրի համաձայն, նրա տարեկան աշխատավարձը 7 մլն եվրո է: Համեմատության համար նշենք, որ ռուսներին պայքարից դուրս մղած Հունաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Ֆեռնանդու Սանտուշն ընդամենը 500 հազար եվրո է ստանում: Իսկ ահա չեխերի գլխավոր մարզիչ Միխալ Բիլեկի աշխատավարձը 35 անգամ է զիջում Ադվոկատի վաստակին, կազմելով ընդամենը 200 հազար եվրո: Ինչ խոսք, այս թվերը ռուսաստանցի ֆուտբոլասերներին եւ հատկապես երկրի ֆուտբոլի ղեկավարներին լուրջ խորհելու տեղիք պետք է տան:**

**Ադվոկատից հետո ամենաբարձր վարձատրվող մարզիչների եռյակում են Իտալիայի հավաքականի գլխավոր մարզիչ Չեզարե Պրանդելին (3 մլն եվրո) եւ Գերմանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Յոահիմ Լյովը (2,5 մլն եվրո): Իսկ ամենացածրը վարձատրվում էր Խորվաթիայի հավաքականի գլխավոր մարզիչ Սլավեն Բիլիչը, որը տարեկան ընդամենը 160 հազար եվրո էր ստանում: Բայց նա շուտով կհարստանա` գլխավորելով Մոսկվայի «Լոկոմոտիվը»:**

## 4 ֆրանսիացիներ հավանաբար զրկվեն պարգեւավճարից

Ֆուտբոլի Եվրոպայի առաջնության քառորդ եզրափակիչ դուրս գալու համար Ֆրանսիայի հավաքականի յուրաքանչյուր ֆուտբոլիստին 100 հազար եվրո պարգեւավճար է հասնում երկրի ֆուտբոլի ֆեդերացիայից: Սակայն հավաքականի 4 ֆուտբոլիստներ` Բեն Արֆան, Մ'Վիլան, Մենեզն ու Նասրին, որոնք վիրավորական արտահայտություններ էին թույլ տվել ֆրանսիական գործակալության լրագրողի հասցեին, հնարավոր է, որ զրկվեն այդ գումարից:

Ֆրանսիայում շատերը գտնում են, որ այդ ֆուտբոլիստներին պետք է զրկել պարգեւավճարից: Նրանց թվում է պատգամավոր Օլիվիե Ֆորը:

Նշենք, որ բացի ֆեդերացիայի կողմից սահմանված հատուկ պարգեւավճարից, ֆուտբոլիստները այլ գումարներ էլ են ստանում: Օրինակ, յուրաքանչյուր հրավերի համար ֆուտբոլիստներին 10 հազար եվրո է վճարվում հովանավորների կողմից: Ընտրական մրցախաղում հաղթանակի դեպքում եւս 10 հազար եվրո է վճարվում, իսկ ընկերական հանդիպումներում հաղթանակը գնահատվում է 6-14 հազար եվրո` նայած թե մրցակիցը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում ինչ դիրք է գրավում: Ոչ-ոքիի դեպքում գումարը կիսվում է:

Հետաքրքրական է, որ 2010-ի աշխարհի առաջնության ժամանակ Ֆրանսիայի հավաքականում ծագած կոնֆլիկտից հետո երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի գործընկերները «լողացող» պայմանագիր էին կնքել: Հովանավորչության ընդհանուր գումարը 18 մլն եվրո է: Սակայն կախված այն բանից, թե հավաքականն իրեն ինչպես կդրսեւորի խոշոր մրցաշարերում, այդ գումարը կարող է նվազել 20 տոկոսով: Որպեսզի ողջ գումարը ֆեդերացիան ստանա, հավաքականի խաղը պետք է 6,5 բալից ցածր գնահատականի չարժանանա: Եվրոպայի առաջնությունում հավաքականի ելույթն առայժմ 5,5 բալի է արժանացել: Այնպես որ ֆեդերացիան 750 հազար եվրո պակաս գումար կստանա:

## Արշավինը հետաքրքրել է «Գալաթասարային»

Թուրքական «Գալաթասարայի» գլխավոր մարզիչ Ֆաթիհ Թերիմն ակումբի ղեկավարությանը տեղեկացրել է, որ կցանկանար թիմում տեսնել ՌԴ հավաքականի եւ անգլիական «Արսենալի» հարձակվող Անդրեյ Արշավինին: «Գալաթասարայն» արդեն սկսել է ուսումնասիրել Արշավինի տրանսֆերային հարցերը:

Հիշեցնենք, որ Արշավինը մինչեւ 2013-ը պայմանագիր ունի կնքած «Արսենալի» հետ: Մրցաշրջանի ավարտական մասն Արշավինն անցկացրեց «Զենիթում»` խաղալով վարձավճարով: Իսկ ֆուտբոլիստի տրանսֆերային իրավունքները պատկանում են «Արսենալին»:

## Բլատերը կողմ է տեսակրկնությունների օգտագործմանը

ՖԻՖԱ-ի նախագահ Զեպ Բլատերն անդրադառնալով Ուկրաինա-Անգլիա խաղում մրցավարի չհաշված գոլին, նշել է, որ տեսակրկնությունների օգտագործումը նման դեպքերում անհրաժեշտ է հնարավորինս շուտ թույլատրել: Նա կողմ է արտահայտվել նոր տեխնոլոգիաների կիրառմանը, որոնք թույլ կտան էլեկտրոնային հատուկ սարքերի միջոցով հստակ արձանագրել դարպասի գրավումը:

# ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

## Մալաֆյանը եռամյա պայմանագիր կնքեց «Վիկտորիայի» հետ

**Երեւանի «Փյունիկի» եւ Հայաստանի երիտասարդական հավաքականի կիսապաշտպան Էդգար Մալաֆյանը հաջող փորձաշրջան անցնելով Պլզենի «Վիկտորիայում», եռամյա պայմանագիր կնքեց ակումբի հետ:**

**«Փորձաշրջանի ժամանակ Էդգարը լավ տպավորություն թողեց մեզ վրա: Նա հեռանկարային ֆուտբոլիստ է եւ առաջիկա շաբաթներին դեռ պետք է հարմարվի նոր կոլեկտիվին», նշել է ակումբի գլխավոր տնօրեն Ադոլֆ Շադեկը:**

**Պայմանագրի ստորագրման առիթով իր ուրախությունն է արտահայտել թիմի գլխավոր մարզիչ Պավել Վրբան. «Բավական ժամանակ հետեւում էինք Էդգարի ելույթներին: Փորձաշրջանի ընթացքում համոզվեցինք, որ նա մեծ ներուժ ունեցող ֆուտբոլիստ է: Նա կարող է խաղալ հարձակման թե՛ ձախ, թե՛ աջ թեւում, շատ արագ է կողմնորոշվում գրոհելիս: Նրա խաղային որակները բարձր գնահատեցին նաեւ թիմի ֆուտբոլիստները: Հիմա գլխավոր խնդիրներից մեկն այն է, որ նա արագ սովորի չեխերեն եւ շուտ մերվի կոլեկտիվին: Գտնում եմ, որ Մալաֆյանին կհաջողվի արժանիորեն փոխարինել Վացլավ Պիլարժին»:**



## Արթուր Սարկիսովը հեռացավ «Շիննիկից»

Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի հարձակվող Արթուր Սարկիսովը, որը գործող պայմանագիր ունի Մոսկվայի «Լոկոմոտիվի» հետ եւ վարձավճարով հանդես էր գալիս Յարոսլավլի «Շիննիկում», հեռացավ թիմից:

Հիշեցնենք, որ «Շիննիկին» չհաջողվեց ՌԴ պրեմիեր լիգայի ուղեգիր նվաճել: Սարկիսովը «Շիննիկում» արդյունավետ խաղ ցուցադրեց` 8 գնդակով ցույց տալով թիմում 2-րդ արդյունքը:

## Աշխարհի ամենաերիտասարդ գրոսմայստերներից մեկը

Ղազախ շախմատիստուհի Ժանսայա Աբդումալիկը շախմատի աշխարհի ներկայիս չեմպիոնուհի Հոու Յիֆանից հետո դարձավ ամենաերիտասարդ գրոսմայստերը: Ժանսայան միջազգային գրոսմայստերի 2 նորմաները գերազանցել էր այս տարվա հունիսին Մոսկվայում եւ Ալուշտայում կայացած մրցաշարերում` վարկանիշն ավելացնելով 102-ով: Ժանսայան ներկայումս 12 տարեկան 6 ամսական է, իսկ Հոու Յիֆանը գրոսմայստերի կոչմանն էր արժանացել 12 տարեկան 3 ամսականում:

## Մրցավարը 3 խաղով որակազրկվեց

Հունիսի 17-ին կայացած «Միկա»-«Փյունիկ» խաղում մրցավար Տիգրան Հովսեփյանը չէր հաշվել «Միկայի» խփած 2 գոլերը` խախտում արձանագրելով դաշտի տերերի ֆուտբոլիստների կողմից:

Թեեւ «Միկան» չէր բողոքարկել մրցավարի գործողությունները, քանի որ հաղթել էր 3-2 հաշվով, սակայն ֆուտբոլի ֆեդերացիայի մրցավարական կոմիտեն քննարկել էր Տիգրան Հովսեփյանի գործողությունները: Տեսագրությունն ուսումնասիրելուց հետո կոմիտեն պարզել էր, որ «Միկայի» խփած առաջին գոլը, որի հեղինակն Ալեքսանդր Թադեւոսյանն էր, խփվել էր առանց խաղի կանոնների խախտման: Ուստի մրցավարական կոմիտեն որոշեց 3 խաղով որակազրկել Տիգրան Հովսեփյանին:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Պարզեցված ընթացակարգի ծածկագիրն է`**
**ՀՀ ԴԴ ՊԿՀ-ՊԸԱՇՁԲ -2/12**

Պատվիրատուն` Հայաստանի Հանրապետության Դատական դեպարտամենտ պետական կառավարչական հիմնարկը (ՀՀ ԴԴՊԿՀ), որը գտնվում է ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, կազմակերպում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի երրորդ փուլով ընթացող վերանորոգման բարեկարգման շինարարական աշխատանքների ձեռքբերման` գնման պայմանագիր» (այսուհետև` պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի Թբիլիսյան խճուղի 3/9 հասցեում տեղակայված վարչական շենքի երրորդ փուլով ընթացող վերանորոգման բարեկարգման շինարարական աշխատանքների ձեռքբերումը:

Սույն ընթացակարգի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՀՀ ֆինանսների նախարարության ՀՀ գնումների համակարգ **WWW. gnumner.am** էլեկտրոնային հասցեով, կամ դիմել Պատվիրատուին` «ՀՀ Դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ին` ք. Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեով, Գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ Ձ. Աբգարյանին (հեռ. 010 511-787) մինչև սույն 05.07.2012 թվականի ժամը 10:00-ն (ոչ աշխատանքային օր լինելու դեպքում դրան հաջորդող աշխատանքային օրը):

## TM AUDIT
### ՀՀ, Երեւան 0010, Ամիրյան 4/6
### ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 242
**Ներկայացվում է «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ-ի բաժնետերերին**

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ալֆա-Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը առ 31-ը դեկտեմբերի 2011 թ., այդ ամսաթվին ավարտված տարվա համար համապարփակ ֆինանսական արդյունքների մասին, սեփական կապիտալում փոփոխությունների մասին եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը եւ այլ բացատրական ծանոթագրությունները:

**Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները, եւ պլանավորել ու իրականացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների եւ սխալների հետեւանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման եւ ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների եւ ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի ֆինանսական վիճակի՝ առ 31.12.2011 թ., ինչպես նաեւ այդ ամսաթվի դրությամբ ավարտված տարվա ֆինանսական արդյունքների եւ դրամական միջոցների մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկեր՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

*Թաթուլ Մովսիսյան*
*Գլխավոր տնօրեն*
*Լիլիթ Գրիգորյան*
*Աուդիտոր*
*26 հունիսի, 2012 թ.*
*ք. Երեւան, Ամիրյան 4/6*

### «Ալֆա-Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերության
### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| ´000 դրամ | 31/12/11 | 31/12/10 | 01/01/10 |
|---|---|---|---|
| Ակտիվ | | | |
| Հիմնական միջոցներ | 2,080,507 | 2,030,073 | 2,066,163 |
| Ոչ նյութական ակտիվներ | 120,180 | 86,423 | 9,701 |
| Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ համար | 335 | 36,131 | 4,481 |
| Շահութահարկի նվազագույն գումար | 126,231 | 76,325 | 46,622 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 2,327,254 | 2,228,952 | 2,126,967 |
| Պաշարներ | 2,666,357 | 2,730,617 | 2,367,988 |
| Կանխավճարներ պաշարների եւ ծառայությունների համար | 140,148 | 175,332 | 142,475 |
| Առեւտրական եւ այլ դեբիտորական պարտքեր | 947,134 | 877,427 | 505,300 |
| Կանխավճարներ շահութահարկի համար | 11,366 | 8,850 | 15,132 |
| Կանխավճարներ այլ հարկերի եւ պարտ. վճարների համար | 3,082 | 34,731 | 2,324 |
| Փոխառություններ | - | 920 | 920 |
| Դրամական միջոցներ | 152,853 | 72,650 | 225,452 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 128,346 | 155,012 | 134,604 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 4,049,285 | 4,055,539 | 3,394,195 |
| Ընդամենը ակտիվներ | 6,376,539 | 6,284,491 | 5,521,162 |
| Սեփական կապիտալ եւ պարտավորություններ | | | |
| Կանոնադրական կապիտալ | 1,229,787 | 1,229,787 | 1,229,787 |
| Էմիսիոն եկամուտ | 911,458 | 911,458 | 1,173,153 |
| Կուտակված շահույթ | 942,778 | 969,329 | 454,322 |
| Վերագնահատումից տարբերություններ | 75,085 | - | - |
| Պահուստային կապիտալ | 184,470 | 184,470 | 266,463 |
| Սեփական կապիտալի այլ տարրեր | 521,424 | 521,424 | 521,424 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 3,865,002 | 3,816,468 | 3,645,149 |
| Վարկեր | 150,000 | 150,000 | 150,000 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 233,457 | 209,979 | 204,732 |
| Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ | 383,457 | 359,979 | 354,732 |
| Վարկեր | 346,743 | 389,424 | 123,464 |
| Փոխառություններ | - | - | 130,000 |
| Առեւտրային եւ այլ կրեդիտորական պարտքեր | 1,574,587 | 1,562,931 | 1,157,431 |
| Կանխավճարներ պատվերների համար | 41,909 | 56,094 | 19,582 |
| Այլ հարկերի եվ պարտ. վճարների գծով պարտավորություն | 32,985 | 28,035 | 20,662 |
| Աշխ.-ի եւ այլ կարճ. հաս. գծով պարտավորություն | 74,465 | 61,749 | 46,346 |
| Շահաբաժնի գծով պարտավորություն | 48,913 | - | 23,796 |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | 8,478 | 9,811 | - |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 2,128,080 | 2,108,044 | 1,521,281 |
| Ընդամենը սեփական կապիտալ եւ պարտավորություններ | 6,376,539 | 6,284,491 | 5,521,162 |

*Գլխավոր տնօրեն* — *Ա. Գրիգորյան*
*Գլխավոր հաշվապահ* — *Հ. Գրիգորյան*

### «Ալֆա-Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերության
### ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| ´000 դրամ | 2011 | 2010 |
|---|---|---|
| Հասույթ | 11,285,618 | 10,984,561 |
| Վաճառքի ինքնարժեք | (9,689,948) | (9,394,701) |
| Համախառն շահույթ | 1,595,670 | 1,589,860 |
| Այլ եկամուտներ | 265,753 | 105,829 |
| Իրացման ծախսեր | (1,138,052) | (1,031,383) |
| Վարչական ծախսեր | (316,171) | (353,485) |
| Այլ ծախսեր | (73,018) | (55,604) |
| Գործառնական շահույթ | 334,182 | 255,217 |
| Ֆինանսական եկամուտներ | - | 87 |
| Ֆինանսական ծախսեր | (71,626) | (39,302) |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս) | (23,989) | 38,084 |
| Շահույթը մինչեւ հարկումը | 238,567 | 254,086 |
| Շահութահարկի գծով ծախս | (65,118) | (82,767) |
| Զուտ շահույթ | 173,450 | 171,319 |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ՝ առանց հարկերի | | |
| Հիմնական վերագնահատումից արժեքի աճ | 75,085 | - |
| Համապարփակ ֆինանսական արդյունքների հանրագումար | 248,535 | 171,319 |

*Գլխավոր տնօրեն* — *Ա. Գրիգորյան*
*Գլխավոր հաշվապահ* — *Հ. Գրիգորյան*

### «Ալֆա-Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերության
### ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**2011 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

| ´000 դրամ | Կանոնադրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Կուտակված շահույթ | Պահուստային կապիտալ | Սեփական կապիտալի այլ տարրեր | Վերագնահատումից տարբերություններ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2010 | 1,229,787 | 1,173,153 | 454,322 | 266,463 | 521,424 | | 3,645,149 |
| Տարվա զուտ շահույթ | - | - | 171,319 | - | - | - | 171,319 |
| Ներքին շարժ | - | (261,695) | 343,688 | (81,993) | - | - | - |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2010 | 1,229,787 | 911,458 | 969,329 | 184,470 | 521,424 | - | 3,816,468 |
| Տարվա զուտ շահույթ | - | - | 173,450 | - | - | - | 173,450 |
| Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ | - | - | - | - | - | 93,856 | 93,856 |
| Այլ համապարփակ եկամտի գծով շահութահարկ | - | - | - | - | - | (18,771) | (18,771) |
| Շահաբաժիններ | - | - | (200,000) | - | - | - | (200,000) |
| Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2011 | 1,229,787 | 911,458 | 942,778 | 184,470 | 521,424 | 75,085 | 3,865,002 |

*Գլխավոր տնօրեն* — *Ա. Գրիգորյան*
*Գլխավոր հաշվապահ* — *Հ. Գրիգորյան*

### «Ալֆա-Ֆարմ» փակ բաժնետիրական ընկերության
### ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
**2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

| | | |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր | | |
| վաճառքներից | 13,329,195 | 12,781,532 |
| այլ գործունեությունից | 198,201 | 132,327 |
| նյութերի, ապրանքների ձեռք բերումից | (10,117,597) | (10,153,430) |
| աշխատանքների, ծառայությունների ձեռք բերումից | (248,440) | (311,949) |
| վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից | (882,502) | (725,000) |
| հարկեր, պարտադիր վճարներ | (1,443,689) | (1,581,351) |
| այլ գործունեությունից | (420,761) | (275,569) |
| Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր | 414,407 | (133,440) |
| Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր | | |
| տրամադրված փոխառությունների մարումից | 920 | - |
| հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերումից | (69,262) | (87,208) |
| Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր | (68,342) | (87,208) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր | | |
| վարկերից եւ փոխառությունների մարումից | (43,503) | 2,661,913 |
| վարկերի եւ փոխառությունների ստացումից | - | (2,532,471) |
| վճարված շահաբաժիններ եւ տոկոսներ | (221,891) | (56,579) |
| Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր | (265,394) | 72,863 |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 80,671 | (147,785) |
| արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | (469) | (5,017) |
| Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվարի | 72,650 | 225,452 |
| Դրամական միջոցների մնացորդը առ 31 դեկտեմբերի | 152,852 | 72,650 |

*Գլխավոր տնօրեն* — *Ա. Գրիգորյան*
*Գլխավոր հաշվապահ* — *Հ. Գրիգորյան*

## ԼԵԳԱԼ-ԱՈՒԴԻՏ ՍՊԸ
### Սարյան 10/10, հեռ.՝ (+374 10) 54 56 27
### 27, հունիսի 2012 թ.
### Աուդիտորական եզրակացություն «Իդրամ» ՍՊԸ մասնակիցներին

Մեր կողմից աուդիտի են ենթարկվել «Իդրամ» ՍՊ Ընկերության կից ներկայացված 2011 թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների եւ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաեւ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

**Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրենության պատասխանատվությունը**

Նշված ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու եւ արժանահավաս ներկայացնելու համար պատասխանատվություն է կրում ընկերության տնօրենությունը: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետեւանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու եւ արժանահավասորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում եւ պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն եւ կիրառում, ինչպես նաեւ տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

**Աուդիտորական պատասխանատվությունը եւ աշխատանքների բնույթի նկարագիրը**

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրինք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոններ, աուդիտը պլանավորենք եւ իրականացնենք ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են աուդիտի դատողության վրա հիմնված ընթացակարգերի իրականացում, որոնք ուղղված են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության եւ բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանը: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաեւ ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների գնահատումը, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական արժեքների գնահատումների հետազոտումը եւ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման ընդհանուր գնահատումը:

Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով, «Իդրամ» ՍՊ Ընկերության կողմից կազմված տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի, ինչպես նաեւ նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի մասին տալիս են ճշմարիտ եւ իրական պատկերը եւ կազմված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան:

***«Լեգալ-Աուդիտ» ՍՊԸ տնօրեն եւ աուդիտոր***
***Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ***

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Հազար դրամ | Ծանոթ | 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամ | 2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|---|
| Ակտիվներ | | | | |
| Ոչ ընթացիկ ակտիվներ | | | | |
| Հիմնական միջոցներ | 4.1 | 3,968 | 541 | 631 |
| Ոչ նյութական ակտիվներ | 4.2 | 160,836 | 185,573 | 185,459 |
| Հետաձգված հարկային ակտիվներ | 4.3 | 375 | 166 | 51 |
| Ոչ ընթացիկ ակտիվներ հետաձգված ծախսերի գծով | | 1,949 | 2,165 | 2,165 |
| | | 167,128 | 188,445 | 188,306 |
| Ընթացիկ ակտիվներ | | | | |
| Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր | 4.4 | 1,527 | 532 | 184 |
| Դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 4.5 | 123 | 53 | 5 |
| Դեբիտորական պարտքեր սոց. վճարների գծով | | - | 0.3 | - |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 4.6 | - | - | 28 |
| Դրամական միջոցներ | 4.7 | 15,304 | 11,289 | 1,756 |
| | | 16,964 | 11,874 | 1,973 |
| Ընդամենը ակտիվներ | | 184,082 | 200,319 | 190,279 |
| Սեփական կապիտալ և պարտավորություններ | | | | |
| Կանոնադրական կապիտալ | 4.8 | 208,496 | 185,496 | 185,496 |
| Կուտակված շահույթ/(վնաս) | 4.8 | (77,245) | (25,277) | (11,896) |
| | | 132,251 | 160,219 | 173,600 |
| Ոչ Ընթացիկ պարտավորություններ Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ | | - | - | - |
| Ընթացիկ պարտավորություններ | | | | |
| Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր | 4.9 | 42,147 | 17,996 | 2,385 |
| Կարճաժամկետ փոխառություններ հիմնադիրներից | | 8,497 | 20,977 | 14,037 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 4.10 | - | 135 | - |
| Աշխատավարձի գծով պահուստներ | 4.3 | 1,877 | 833 | 257 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոց. վճարի գծով | | 310 | 159 | - |
| | | 52,831 | 40,100 | 16,679 |
| Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ | | 184,082 | 200,319 | 190,279 |

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝*
***Տնօրեն՝ Գ. Ստեփանյան***

### ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Հազ. դրամ | 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|
| Ծառայությունների մատուցումից հասույթ | 11,191 | 4,894 |
| Այլ եկամուտ | 5 | 1 |
| | 11,196 | 4,895 |
| Ինկասացիոն ծախսեր | (368) | - |
| Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր | (19,185) | (7,023) |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | - | (1,240) |
| Տարածքի վարձավճար | (-6,635) | (3,000) |
| Մաշվածության և ամորտիզացիայի ծախսեր | (13,505) | (252) |
| Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրություն | (1,837) | (2,273) |
| Մարքետինգի և գովազդի ծախսեր | (591) | (627) |
| Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր | (2,998) | (1,936) |
| Գրասենյակային և կոմունալ ծախսեր | (1,964) | (593) |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | (450) | - |
| Չփոխհատուցվող հահs. և այլ պարտ. վճարների գծով ծախսեր | - | (307) |
| Աշխատավարձի գծով պահուստաֆոնդ | (1,044) | (576) |
| Այլ ծախսեր | (2,170) | (545) |
| Գործառնական շահույթ/վնաս | (39,551) | (13,477) |
| Հիմնական միջոցների դուրս գրման ծախսեր | (48) | - |
| Այլ ֆինանսական արդյունքներ | (8) | (19) |
| շահույթ/(վնաս) նախքան հարկումը | (39,607) | (13,496) |
| Շահութահարկի գծով ծախս/(փոխհատուցում) | 209 | 115 |
| Տարվա շահույթ/(վնաս) | (39,398) | (13,381) |
| Սխալների ուղղումից | (12,570) | - |
| | - | - |
| Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ | (51,968) | (13,381) |

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝*
***Տնօրեն՝ Գ. Ստեփանյան***

### ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Հազ. դրամ | Ծանոթ. | Կանոնադրական կապիտալ | Կուտակված շահույթ/(վնաս) | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| 2010թ. հունվարի 1-ի դրությամբ | | 185,496 | (11,896) | 173,600 |
| Տարվա շահույթ/(վնաս) | | - | (13,381) | (13,381) |
| 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | | 185,496 | (25,277) | 160,219 |
| Կանոնադրական կապիտալի աճ (նվազում) | | 23,000 | - | 23,000 |
| Տարվա շահույթ/(վնաս) | | - | (39,398) | (39,398) |
| Սխալների ճշգրտման արդյունքը | | - | (12,570) | (12,570) |
| 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | 4.9 | 208,496 | (77,245) | 131,251 |

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝
***Տնօրեն՝ Գ. Ստեփանյան***

### ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| *հազար դրամ* | 2011 | 2010 |
|---|---|---|
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | 2,493,591 | 459,450 |
| Արտադրանքի, ապրանքների, ծառայությունների իրացումից | - | - |
| Մուտքեր | 261,805 | 380,950.00 |
| Գործառնական այլ գործունեությունից | 2,231,786 | 78,500.00 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների | - | - |
| ելքեր | 2,499,705 | 453,155 |
| Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով | - 184 | - |
| Վճարումներ աշխատակիցներին եւ նրանց անունից | - 15,125 | -5327 |
| Ստացված ծառայությունների դիմաց վճարումներ | - 365,315 | - 371,899.00 |
| Շահութահարկի վճարում | - 70 | - 48.00 |
| Հարկեր, տուրքեր, պարտադիր այլ վճարներ | - 5,427 | - 1,700.00 |
| Գործառնական այլ գործունեությունից | - 2,113,584 | -74181 |
| Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | - 6,114 | 6,295 |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | 23,000.00 | 1,940.00 |
| Կանոնադրական կապիտալի վճարում | 23,000 | 1,940.00 |
| ՀՄ-ների եւ ՈՆԱ-ների վաճառքներից | - | - |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր | - | - |
| ՀՄ-ների եւ ՈՆԱ-ների ձեռք բերման գծով | - | - |
| Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | 23,000.00 | 1,940.00 |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր | 10,000 | - |
| Ստացված վարկերից եւ փոխառություններից | 10,000 | - |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր | - 23,001 | - |
| Ստացված վարկերի եւ փոխառությունների մարումից | - 23,001 | - |
| Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր | - 13,001 | - |
| Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր | 3,885 | 8,235 |
| Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը | 9,280 | 1,045 |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | 2 | - |
| Դրամական միջոցների մնացորդը հաշվետու տարվա վերջին | 13,167 | 9,280 |

*Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են՝*
***Տնօրեն՝ Գ. Ստեփանյան***

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 26.6.2012, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: